



(Ը. Տարի) ԴԵԿՏԵՄԲԵՐ 1932

(8^{me} Année) Décembre 1932

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏԿԱՄԸ

Գ. Գ. Խ.

Հոգ. Կեանք

ՄԵԶԻԸ

Ազատ Թարգմ. Ն. Մ.

ԲԺՇԿՈՒԱԾ ԲՈՐՈՏԻՆ

ՄԱԲՐՈՒԹԻՒՆԸ

Թարգ. Ի. Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌԱՆԱԼ

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՄԲԱՆՁԵԼԻ ՀՋՕՐ ԱՍՏՈՒԱԾ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

«ՈՒՍՏԻ ՏՕՆ ԿԱՏԱՐԵՆՔ»

Ս. Գրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՒՆԸ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Մանկանց սիւնակ

ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆԻ ԾՆՈՒՆԴԸ

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամասներմը մէկու ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկա միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չմանջնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'օգէ ծառայել անոնց:



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամասներմը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ մէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Սաղ. ՃԺԹ. 18:


ՄՐ. Դրոց Միութեան անդամներն ամէն օր կը կարդան ՍՐ. Դրոց որոշուած մասը եւ կը հրաւիրուին իրարու համար անօրէն ամէն չիբրակի առաւօտ:

Սր. Գրոց Միութիւնը կապակցութիւն ունի շատ եկեղեցիներու, Սր. Գրոց ուսանողներու, դպրոցներու եւ գոյէճներու հետ, եւ մեծերու թէ փոքրերու արդիւնաւոր սատար մը եղած է Սր. Գիրքը օրէ օր կարդալու եւ խորհրդածութեան առարկայ ընելու համար:

Սր. Գրոց Միութեան իբր 6,000 ճիւղեր կան Մեծ Բրիտանիոյ մէջ: Եւրոպայի մէջ խոշոր ճիւղեր կան — Ֆրանսա, Իտալիա, Տանիմարքա, Սքանտինաւիա, Հոլանտա, եւլն: Ասիոյ մէջ — Հնդկաստան, Չինաստան, Ճափոն, Բորէա: Աւստրալիոյ մէջ — Նոր Հարաւային Ուէլլս, Վիքթորիա, Թասմանիա, Նոր Զելանտա: Ամերիկայի մէջ — Քանադա, Միացեալ Նահանգներ, Պրազիլ, Արճէնթին, եւլն: Ափրիկէի մէջ — Հիւսիսային, Հարաւային, Արեւելեան, Արեւմտեան եւ Կեդրոնական Ափրիկէ ու բոլոր Կղզիները:

Սր. Գրոց Միութիւնը կը գործէ անհատներու եւ ազգերու լաւագոյն շահերուն համար: Մեծ ծառայութիւն կը մատուցանէ ապագային՝ նորահաս սերունդին դիւրընկալ միտքերուն վրայ տպաւորելով Սր. Գրոց սկզբունքները, որոնցմէ կախեալ է ճշմարիտ յաջողութիւնը:

Ամէն որ կրնայ անդամակցիլ Սր. Գրոց Միութեան, բայց անոնք միայն մասնակցելու են որոնք իրապէս կը բաղձան կանոնաւորապէս ու աղօթքով կարդալ որոշուած մասերը:



Մասնաճիւղ

ԱՆԴԱՄԻ ՔԱՐՏ

ԱՆԴԱՄԻՆ ԱՆՈՒՆԸ


Ընդունուած

Ստորագրուած

ՃԻՂԻՆ

ՊԱՏՈՒԱԿԱԼ

ՔԱՐՏՈՒՂԱՐԸ



1933

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Սր. Գրոց Միութեան, որ 1879ին կազմուեցաւ, նպատակն է զարկ տալ Սր. Գիրքը կանոնաւորապէս ամէն օր կարդալու շարժման:

Որդեգրուած մեթոտն է Սր. Գիրքը ծայրէ ծայր կարդալ հինգ տարուան ընթացքի մը մէջ: Ամէն տարի ամբողջովին կը կարդացուին Աւետարաններուն երկուքը եւ առաքեալներու թուղթերուն երկու երեքը: Որչափ կարելի է, Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի գիրքերը փոփոխակի կը կարդացուին, Սաղմոսներն ալ մերթ ընդ մերթ միւս գիրքերուն միջեւ: Առօրեայ ընթերցումները միջին հաշուով տասներորս համար են եւ մասնաւոր կերպով կը յարմարին դեռահասներու եւ գործի մարդոց պէտքերուն:

Սր. Գրոց Միութիւնը Աղօթքի Միութիւն է միանգամայն: Անդամներն ամէն կիրակի առաւօտ կ'աղօթեն իրարու համար:

Սր. Գրոց Միութիւնը տարածուած է ամէն տեղ եւ ունի 850,000 անդամ: Սր. Գրոց տարեկան ընթերցումներուն ցանկը կը հրատարակուի 50 տարբեր լեզուներով:

Այս Միութեան անդամակցելու համար անհրաժեշտ է ձեր անունը դրկել տեղային քարտուղարի մը, որ ձեզի կու տայ անդամակցութեան քարտ մը առօրեայ ընթերցումներու ցանկը պարունակող: Այդ քարտերը կը նորոգուին տարուէ տարի:

ԲԱՆԲԵՐ

Արթնցի՛ր գուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր Կանգիտար մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Հ. ՏԱՐԻ

Դեկտեմբեր 1952

Թիի 12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏԳԱՄԸ

Անիկա պէտք է որ մեծնայ, բայց եւ պըզտիկ-
նամ:

Իսկան երկրպագութիւն ըրին Անոր:

Մատթ. Բ. 11

Դարձեալ կը մօտենայ Սուրբ Ծնունդը. եւ
մենք մեծ ու փոքր կը պատրաստուինք հաւաք-
ուելու մեր տուններուն ու եկեղեցիներուն մէջ եւ
լսելու ցնծադիր աւետիսը, «Երկինքի բարձրու-
թեան մէջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խա-
ղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն», եւ ամէն
ատենէ աւելի այս առթիւ յիշելու «Սէր անհուն
Յիսուս»ի բերնով իսկ արտասանուած մեծ պատ-
գամը, «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մին-
չեւ Իր միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն
ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւի-
տենական կեանք ունենայ»:

Կա՞յ աւելի բերկրալից ժամ մը, քան այն երբ
մարդ՝ ծնրագիր Բեթլեհէմի մսուրին առջեւ՝ կը
տեսնէ, կը զգայ, կ'ապրի հայրական մարմնացեալ
սէրը իր Արարչին: Կը տեսնէ թէ ինչպէս Աստ-
ուած հայրերուն շատ կերպերով խօսելէն ետ-
քը՝ վերջապէս խօսեցաւ մեզի ալ Իր Որդիովը,
«Որ Իր փառաց լոյսն է, Իր էութեան բուն պատ-
կերը» (Երբ. Ա. 1-5):

Ի՞նչ պիտի ըլլայինք մենք առանց այդ երկ-
նատուր լոյսին. մեր բոլոր եռանդուն խոզարկու-
թիւններովն հանդերձ՝ ուշիմ՝ յոյներուն գտածէն
աւելի բան մը չպիտի գտնէինք, «Անծանօթ Աստ-
ուած» մը միայն, վերացական, ստուերային էակ
մը՝ առանց մասնաւոր, բացարձակ եւ մեր սըր-
տին խօսող յատկանիշներու. կամ փարիսեցիին
նման Հին ուխտի վսեմ պատգամները օրէնքնե-
րու եւ աւանդութեանց շարքի մը պիտի վերա-
ծէինք եւ պիտի ճնշուէինք անոնց ծանր բեռան

տակ. և զանոնք տուող Աստուծոյն մէջ ուրիշ մէ-
կը չպիտի տեսնէինք, եթէ ոչ բծախնդիր, խիստ
եւ ժլատ Տէր մը, Որ մեր կարծեցեալ հաւատա-
րիմ ծառայութիւններուն փոխարէն մեզի ուլ մը
իսկ չտար մեր «Բարեկամներուն հետ ուրախու-
թիւն ընելու» (Ղուկ. ԺԵ. 29):

Իսկ մեր բարոյական կեանքը: Միթէ աւե-
լի՞ բան մը եղած պիտի ըլլար, քան այն, որ
Պօղոս նկարագրած է ըսելով՝ «Մենք ալ ա-
տեն մը անմիտ էինք, անհնազանդ, մոլորեալ և
զանազան ցանկութիւններու ու հեշտութիւննե-
րու կը ծառայէինք, չարութիւնով ու նախանձով
կը վարուէինք, ատելի էինք ու մէկզմէկ կ'ա-
տէինք», (Տիմ. Գ. 3):

Միայն Բեթլեհէմի Մանուկն էր, Որ մեզ ա-
զատեց ու այսօր ալ կ'ազատէ մեր մտաւոր, բա-
րոյական ու հոգեւոր քառէն: Անիկա Իր խո-
նարհ բայց հրաշալի ծնունդովը, Իր սիրոյ ու
զօրութեան զործերով բեզուն աստուածային
կեանքովը, Իր անձնագոհ մահովը եւ փառաւոր
յարութիւնովը ազամանդեալ գրիչով մեր միտ-
քին վրայ դրոշմեց թէ սէր ու լոյս է Աստուած,
եւ թէ մեր կեանքը Անկէ ծագած է, Անոր իմաս-
տուն ու հայրական հսկողութեան տակ կը զրտ-
նուի եւ չպիտի վերջանայ մութ փոսի մը մէջ,
հապա Իր Արարչին պիտի երթայ: Այս աստուա-
ծային լոյսին՝ ճշմարիտ աստուածգիտութեան ազ-
դեցութեամբ եւ Իր արեան եւ Սբ. Հոգւոյն զօ-
րութեամբ Բեթլեհէմի Մանուկը մեզ փրկեց նաեւ
վերոյիշեալ մեղքերու պատիժէն ու զերութենէն,
խաւարի իշխանութենէն, եւ մեզ կենդանացուց
յարուց ու նստեցուց երկնաւորներուն մէջ:

Կարճ, Յիսուս Մանկան միջոցաւ՝ Աստուած
Ինքզինքն էր Որ մեզի տուաւ իբր լոյս՝ մեր

միտքերը լուսաւորելու եւ իբր սէր՝ մեր աստե-
լավառ ու խռովեալ սրտերը սիրով ու խաղաղու-
թեամբ լեցնելու, մոլորեալ անառակ սրգին զըտ-
նելու եւ հայրենի տունն առաջնորդելու համար:

Սակայն Աստուծոյ այս թանկագին պարգեւը
քիչեր միայն կ'ընդունին: Աւետարաններէն կը
սորվինք թէ ինչպէս դիմաւորեց այն ատենուան
մարդկութիւնը Յիսուս Մանուկը: Այսօր ալ մի-
եւնոյնն է իրողութիւնը: Այսօր ալ շատեր կը խը-
ռովին Հերովդէսի նման եւ ուղղակի թշնամա-
կան դիրք կը բռնեն նորածին Քրիստոսի հան-
դէպ, կը ջանան խեղդել Անոր ազդումները՝ ի-
րենց սաղմնային վիճակին մէջ եւ կ'աղաղակեն,
«կոտորենք Անոր կապերը, ու մեզմէ մէկդի ձը-
գենք Անոր լուծը» (Սաղ. Բ. 3), երբ Անիկա իր
Հոգիովը անոնց սրտերուն մէջ ծնանիլ ուզէ: Ին-
չո՞ւ. քանզի անոնք կը տեսնեն թէ իրենց ես-ն
ու Յիսուս միասին չեն կրնար բնակիլ. ես-ը գա-
հագուրկ ըլլալու է օծեալ Մանկան առջեւ: Բայց
ես-ը դիւրին դիւրին տեղի չտար, իր բոլոր ու-
ժերը կը լարէ, պատերազմ կը հրատարակէ եւ
եւ կը սպաննէ Քրիստոսը, որպէսզի ինքը կարե-
նայ սանձարձակ տիրապետել:

Մարդոց մի ուրիշ խումբը կը նմանի քա-
հանայապետներուն ու դպիրներուն եւ Երուսա-
ղէմի ու Բեթլէհեմի բնակիչներուն, որոնք հո-
վիւներէ ու մոգերէ լսեցին ուրախալի լուրը,
բայց անհոգ ու անտարբեր իրենց տեղը նստե-
ցան, ետեւէ չեղան գտնելու նորածին թագաւո-
րը: Այդ դասուն պատկանողները հիմա ալ մեծ
բանակ մը կը կազմեն: Անոնք բացարձակ թըշ-
նամի չեն Քրիստոսի, յաճախ քեզ կ'ապահովցը-
նեն թէ միայն յարգանք ունին Անոր անձին
ու բարոյական սկզբունքներուն հանդէպ: Բայց
այնքան կլանուած են իրենց ստացուածքէն ու
առօրեայ զբաղումներէն որ այլեւս ժամանակ
չունին փնտռելու Յիսուս Մանուկը. իրենց զրա-
մը, այգիներն ու արտերը, իրենց խանութի,
զրասենեակի եւ այլ աշխատանքը, իրենց կիներն ու
զաւակները, ընտանեկան ու ընկերային հաճոյք-
ները, թատրոնը, սինեման, պարասրահը եւն են.
զրաւած են զիրենք ամբողջովին: Աւետարանի
նմանութիւնը զործածելով իրենց նոր գնած ար-
տը տեսնելու կ'երթան կամ իրենց հինգ զոյգ ե-
զը կը փորձեն եւ կամ իրենց նորապստակ կիներ
առանձին ձգել չեն ուզիր: Ուստի չեն կրնար նո-
րածին Քրիստոսը իրենց սրտին մէջ ընդունիլ,
որպէսզի Անիկա գայ ու իրենց հետ ընթրիք ընէ:

Այս երկու դասուն պատկանողներուն թիւը
ահարկու է: Սակայն գոհութիւն Աստուծոյ որ այ-

սօր ալ կը գտնուի զոնէ փոքր խումբ մը այն-
պիսի անձերու, որոնք թշնամական ու անտար-
բեր դիրք չեն բռներ Յիսուսի հանդէպ. Անոր ծը-
նընդեան աւետիսը ցնծութեամբ կը լեցնէ անոնց
հոգին: Ուստի Բեթլէհեմի հովիւներուն եւ Արե-
ւելքի մոգերուն նման կը հարցնեն, «Ո՞ւր տեղ
է Ան որ հրէաներուն թագաւոր ծնաւ», Բայց ոչ
միայն այսքան. կան շատեր, որոնք զԱյն գտած
ալ են եւ «Մեծ ուրախութիւնով ուրախա-
ցած», եւ զԱյն իրենց սրտերուն մէջ ընդունած:

Սակայն այսքանը զեռ չբաւեր, ինչպէս կը
մատնանշէ մեր այս գրութեան վերեւ նշանակ-
ուած համարը, «Անիկա պէտք է որ մեծնայ բայց
ես պզտիկնամ»: Զբաւեր միայն Յիսուսը մեր սր-
տին մէջ ընդունիլ իբր փոքր Մանուկ մը եւ փա-
կել զԱյն ընդ միշտ նեղ անկեան մը մէջ: Ատով
պիտի նմանէինք այն մամիկին, որ կը կարծէր
թէ Յիսուսը միշտ մանուկ մնացած է: Ուստի երբ
օր մը տեսաւ նկար մը, ուր Անիկան երկայացուած
է իբր Հափահաս մարդ, չկրցաւ զարմանքը զըս-
պել ու աղաղակեց, «Այսքան ալ մեծ Յիսուս,
չէ՞ որ Ան միայն մանուկ մըն էր», Նոյնն է նաեւ
յաճախ մեր ըմբռնումը: Կը խորհինք թէ Յի-
սուս յաւիտենական մանուկ մը մնալու է մեր մէջ:
Կը բաւէ որ Անիկա մեր մէջ ծնած է, կը բաւէ
որ մենք վերստին ծնած ենք: Ո՛չ, ընթերցող, ոչ:
«Անիկա պէտք է որ մեծնայ», եւ իբր թագաւոր
իշխէ մեր սրտին, մաքին ու մարմնոյն վրայ, եւ
պէտք է որ մեր ես-ը օրէ օր պզտիկնայ Անոր
առջեւ եւ վերջապէս բոլորովին անհետի: Նմանե-
լու ենք այն երաժիշտին, որ նախ կը խորհէր թէ
ինք է աշխարհի ամենէն հանճարեղ ու առաջնա-
կարգ արուեստագէտը: Բայց որքան յառաջդի-
մեց իր արուեստին մէջ եւ որքան լաւ ճանչցաւ
Մոցարդը, նոյն համեմատութեամբ իր աչքերուն
առջեւ պզտիկցաւ իր անձը եւ մեծցաւ Մոցար-
դը: Ան նախ կ'ըսէր, «Միայն ես», բայց աստի-
ճանաբար սորվեցաւ ըսել, «Ես ու Մոցարդ... Մո-
ցարդ ու ես... Միայն Մոցարդ»:

Նոյնը ըլլալու է նաեւ մեր դիրքը: Յիսուս
Մանուկը մեր մէջ ալ հետզհետէ մեծնալու է եւ
տիրելու մեր սրտին ամէն մէկ խորշին. մեր
բոլոր խորհուրդները, զգացումներն ու փափաք-
ները Անոր հակակշորին տակ գտնուելու են, Անոր
սէրէն բղխելու են: Ան ըլլալու է ամէնը ամէն
բանի մէջ եւ մեր մէջ ամէն բան Անոր երկըր-
պագելու է:

Այս է «Բանբեր», ի բաղձանքն ու մաղթան-
քը իր բոլոր ընթերցողներուն՝ մեր փառաւոր-
եալ Փրկչին Մոնղեան տօնին առթիւ: Գ. Գ. Խ.

ՀՈԳ. ԿԵՆՏԷ

ՄԵՆՔԸ

Ոմանք թերեւս ըսեն թէ մեր յիշած 5 պայմաններն ալ արդէն կատարած են, սակայն տակաւին արժանացած չեն Ս. Հոգւոյն զօրութեան: Արդեօք ինչո՞ւ: Շատ հաւանական է որ կարգ մը պարագաներ կը խաբեն:

Ատոնք շատ հասարակ բաներ են, սակայն կրնան արգելք ըլլալ մեր վերէն զօրութիւն ըստանալուն:

ա) Մեր զօրութեամբ լեցուած ըլլալուն ապացոյցներուն սպասել:

բ) Զօրութեամբ լեցուած ըլլալու մեր բաղձանքին մէջ թերի գտնուի:

գ) Քրիստոսի այգիին մէջ Անոր դորձակցելու փափաքին մէջ թոյլ ըլլալ:

Կարգով առնենք այս երեքն ալ եւ բացատրենք թէ ճիշդ ի՞նչ ըսել կ'ուզենք:

ա) Կրնայ ըլլալ թէ մեր միտքին մէջ որոշ անցք մը գծած ենք եւ կ'ակնկալենք որ Աստուծոյ զօրութիւնը այդ ճամբայով մեզի գայ: Արդեօք սաստկաշունչ հո՞վի մը, կրակէ լեզուներով, տարբեր լեզուներ խօսելու, յուզումներով, յափըշտակութեանց կամ այս կարգի ջախջախիչ փաստերով կ'սպասենք, որպէսզի վստահ ըլլանք թէ զօրութիւնը մեր վրայ իջած է: Մենք վըստահ ենք թէ այս կարգի երեւոյթներ անկարելի են, եթէ ոչ աղիտաբեր: Միզի համար անկարելի է նախատեսել թէ Աստուած ի՞նչ կերպով պիտի գործէ: Կրնանք վստահ ըլլալ սակայն թէ Անիկա մեր ծրարածէն շատ աւելի լաւ միջոցներ ունի Իր զօրութիւնը մեզի տալու:

Վերնաառան մէջ զանուոյ 120 աշակերտները միայն սպասեցին եւ աղօթեցին Սուրբ Հոգիին զաւտեան համար: Անոնք ամենատարտամ գաղափարն իսկ չունէին թէ վերէն զօրութիւնը ի՞նչ կերպով պիտի զգացնէր ու ճանչցնէր Ինքզինքը իրենց: Անոնք արգէն այնքան առանձնաշնորհումներ վայելած էին որ անկարելի էր իրենց գուշակել Քրիստոսի խոստման իրականացումը: Անշուշտ կը յիշէին Յովհաննէս Մկրտիչի խօսքը, «Անիկա ձեզ Սուրբ Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ»: Բայց այդ խօսքին նշանակութիւնն ալ չէին կրնար երեւակայել: Անոնք գիտէին թէ Միսիթարիչը, Ճշմարտութեան Հոգին, իրենց միտքերը պիտի լուսաւորէր. զիրենք ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէր, Տէր Յիսուս Քրիստոսի մասին պիտի վկայէր եւ զԱյն

պիտի փառաւորէր: Իրենց ըսած էր թէ Քրիստոսի վերաբերեալ բաներէն պիտի առնէր եւ բոլոր հաւատացեալներուն պիտի ցուցնէր, իրենց մէջ պիտի բնակէր եւ իրենց պիտի ցոյցնէր թէ Քրիստոս չօրը մէջ էր եւ իրենք Քրիստոսի մէջ ու Քրիստոս իրենց մէջ: Ասկէ աւելին չէին գիտեր, սակայն զո՞հ սրտով եւ վստահութեամբ կ'սպասէին որ Տէրը Իրեն յարմար նկատածին համեմատ իրենց այցելութիւն ընէր:

բ) Հօրը խոստումը ստանալու անոնց կարօտը՝ անսարակոյ՝ օրէ օր կ'աւելնար սպասման այն տասը օրերուն միջոցին: Երբ անոնք երբեմն դուրս ելլելով, «Երկինքին տակ եղած բոլոր ազգերէն» մարդոց կը հանդիպէին, անտարակոյս կը յիշէին իրենց Վարդապետին պատուէրը, «Գացէ՛ք բոլոր աշխարհ» (Մարկ. ԺԶ. 13), «Բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք» (Մատ. ԻԸ. 19), եւ ինքզինքնին անբաւական կ'զգային այդպիսի գործի մը: Ուստի անոնց վերէն զօրութիւն ստանալու բաղձանքը կը սաստկանար:

Մենք ալ չենք կրնար ընդունիլ «Վերէն զօրութիւն» եթէ աշակերտներուն նման չզգանք զօրութեան անհրաժեշտ պէտքը եւ զայն ընդունելու հրատենչ փափաքը: Այս փափաքին ընկերանալու է նաեւ հաւատք: Պողոս առաքեալ Գաղատացւոց կը գրէ, «Որպէսզի մենք Հոգւոյն խոստումները առնենք հաւատքով» (Գաղ. Գ. 14): Չրանք, «Հոգին առէ՛ք հաւատքով»: Սուրբ Գրային պիտի չըլլար այդպէս ըսել, քանզի անիկա քրիստոնեաներու կը գրէ եւ ամէն հաւատացեալ Սուրբ Հոգին ունի: Անիկա մեր մէջ կը բնակի եւ յաւիտեան մեզի հետ պիտի մնայ: Մեր հաւատքով առնելիքը խոստումն է:

Աշակերտները բոլոր սրտով փարած էին իրենց Փրկչին: Անոնց սիրտերը միմիայն Տէրոջմով զբաղած էին: Արդեօք մեզի համար ալ Անիկա «Բոլորովին սիրելի» է, տասը հազարի մէջ երեւելի» է: Մենք ալ ամէն բան թողուցած ենք Անոր համար: Իրապէս զատուած ենք աշխարհէն թէ՛ մինչ Աստուծոյ զօրութիւն կը խնդրենք՝ կը զիմենք նաեւ աշխարհի հաճոյքներուն միեւնոյն ժամանակ: «Այն ատեն զիս պիտի փնտռէ՛ք եւ զիս պիտի գտնէ՛ք, քանզի ձեր բոլոր սրտովը զիս պիտի խնդրէ՛ք» կ'ըսէ Աստուծոյ խօսքը:

Աշակերտները նաեւ բոլորովին դադրած էին իրենց անձերուն վստահելէ: Անոնք ժամանակին ուրախութեամբ աղաղակած էին, «Նոյնիսկ դեւերը մեզի կը հպատակին», սակայն հրմա հասկցած էին թէ առանց վերէն զօրութեան բան մը

չէին կրնար ընել: Մենք ալ հասած ենք այս կէտին: «Քանզի ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ... քու սերունդիդ վրայ իմ հոգիս պիտի թափեմ» (Եսայ. ԽԴ. 3): Իրապէս ծարաւ ենք: Մեր հոգիները «Ծարաւի» են Աստուծոյ, կենդանի Աստուծոյն:

զ) Ուրիշ վտանգ մըն է հաւատալ թէ Աստուած մեզ օրհնելու համար միայն՝ Իր Սուրբ Հոգիին զօրութիւնը մեզի կը պարգեւէ: Այս խորհուրդը սխալ է: Աստուած Իր Սուրբ Հոգիին մեզի կը պարգեւէ որպէսզի ուրիշներ մեր միջոցով օրհնուին: Անոր համար վկայող քրիստոնեայ մը միայն կրնայ զօրութեամբ լեցուած քրիստոնեայ մը ըլլալ: Յօժա՞ր ենք Տէրոջը մեզի ցուցուցած շրջանակին մէջ եւ Անոր մեզի մասնաւոր շրջանակէն դուրս ծառայել: «Իմ ծառաներուս վրայ ու իմ աղախիններուս վրայ... Իմ հոգիս պիտի թափեմ» (Գործ. Բ. 18):

Արդ, կրնա՞նք ճշմարտապէս ըսել,

ա) Ես որեւէ պայման չեմ դնել թէ օրհնութիւնը ինչ կերպով գալու է ինծի:

բ) Իմ ամբողջ էութեամբս կը բաղձամ վերէն զօրութիւն ստանալ:

գ) Յօժար եմ Սուրբ Հոգիին առաջնորդութեան համաձայն վկայելու եւ գործելու:

Եթէ ճշմարտապէս կրնանք այսպէս ըսել, ուրիշ մէկ քայլ մը միայն կը մնայ մեզի, որ է՝ Հօրը խոստումը պահանջելով անոր տիրանալ:

Աղօթքով ու խնամքով նախորդ վեց պայմանները կատարելէ վերջ՝ Տէրը մեզի կ'արտօնէ պահանջել Սուրբ Հոգիին լեցունութիւնը: Ես համոզուած եմ թէ շատեր կը հասնին այս կէտին՝ երբ իրենց ուրիշ ոչինչ կը մնայ ընելիք, բայց միայն հաւատքի պարագ ձեռքը երկարել ու վերէն զօրութիւնը ընդունիլ, սակայն կը խրտչին այդ քայլը առնելէ:

Նշանաւոր աւետարանիչ մը, քաղաքի մը մէջ դորձած միջոցին՝ իր ունկնդիրներուն հոգեւոր վիճակին նկատմամբ խիստ ծանրաբեռնուած զգաց. ուստի հաւատացեալներէն քանի մը հոգի կանչելով անոնց ըսաւ թէ մարդկային ծրագիրներ ու կազմակերպութիւններ բոլորովին անօգուտ էին առանց Սուրբ Հոգիին: Քանի որ այս նիւթին շուրջ կը խօսէր, նշմարեց որ միայն չափաւոր կրթութիւն ունեցող երիտասարդ մը զլխարկը առնելով դուրս ելաւ: Ժամանակ մը վերջը երբ աւետարանիչը մեկնելու վրայ էր, սենեակի մը մէջէն ձայն մը լսեց: Ձայնին հետեւելով՝ յիշեալ երիտասարդը տառապէս երեսի վրայ ինկած գտաւ: Անիկա տակաւին կ'աղօթէր,

«Ով Աստուած, աղերսագին կը պաղատիմ որ վերէն զօրութիւնդ ինծի տաս», կը թախանձէր անիկա: Ժամանակ մը լռելէ վերջ կը յարէ, «Ով Հայր, ինծի ծանօթ ամէն մեղքէ պիտի հրաժարիմ, միայն թէ տուր որ կարող ըլլամ Քեզի համար վկայել»: Դարձեալ լռեց. կարծես թէ իր անցեալ կեանքը աչքերուն առջեւէն կ'անցնէր. յետոյ կրկին շարունակեց, «Այո, ատկէ ալ պիտի հրաժարիմ, այդ ալ պիտի թողում»: Անոր վրայ ոտքի ելլելով՝ աչքերը դէպի երկինք բարձրացնելով ըսաւ, «Եւ հիմա ով Հայր, կը պահանջեմ Սուրբ Հոգիին օրհնութիւնը»: Մէյ մըն ալ երէցին ներկայութիւնը նշմարելով՝ անոր ձեռքը սեղմեց եւ լուսափայլ դէմքով դոջեց, «Ես ընդունեցի զԱյն, զԱյն ընդունեցի»: Այս պարագան բոլորովին փոխեց երիտասարդին կեանքը: Հակառակ կը տգիտութեան՝ քանի մը ամսուայ ընթացքին 60 հոգի անոր միջոցով Քրիստոսի առաջնորդութեան:

Ամէն մէկ բոլորանուէր հաւատացեալ կրնայ այս կերպով վերէն զօրութիւն ստանալ: Ինչպէս որ ոեւէ մեղաւոր կարող է փրկութիւն գտնել ապաշխարութեամբ եւ հաւատքով՝ նմանապէս ալ ոեւէ հաւատացեալ կրնայ զօրութեամբ լեցուած քրիստոնեայ մը ըլլալ ապաշխարութեամբ եւ հաւատքով:

Ֆէնթըն Հօլ, անձնուէր եւ հաւատացեալ միսիոնար մը, զգալով թէ իր վարած քրիստոնէական կեանքէն աւելի օրհնեալ կեանք մը կար ունենալ ինք հասնելու էր, ժամերով կ'աղօթէր որ Տէրը Իր օրհնութեամբ այցելէր իրեն: Օր մը տիկին մը անոր հետ խօսած միջոցին՝ Տէրոջը խիստ պարզ մէկ խոստումը (Ղուկ. ԺԱ. 13) մէջ բերելով ըսաւ, «Մեր երկնաւոր Հայրը Սուրբ Հոգիին կուտայ անոնց որ Իրմէ կը խնդրեն եւ մենք յօժարելու ենք զԱյն ընդունիլ առանց որեւիցէ զգացումի, միմիայն Աստուծոյ խօսքին վստահելով: Ես այդպէս ըրի եւ այդ քայլը առնելէս քանի մը րոպէ վերջը մտքիս մէջ գտնուող Աստուծոյ խօսքը՝ կրակի բոցի պէս եղաւ իմ հոգիիս մէջ»:

Նոյն գիշերը Ֆէնթըն Հօլ այս պայմանին համեմատ ծունկի գալով խնդրեց որ Սուրբ Հոգին զինք լեցնելով իրեն յարմար սեպածը իրեն պարգեւէր իր միսիոնարական գործին համար: Աստուած հրաշալի կերպով պատասխանեց անոր եւ այդ օրուէն սկսեալ անիկա կրցաւ Աստուծոյ խօսքը բոլորովին տարբեր կերպով ըմբռնել: Այնքան ուշադրաւ եղաւ անոր կեանքին փոփոխութիւնը որ զայն զիտոգներէն մէկը նոյն փափա-

քէն մղուած անոր օրինակին հետեւեցաւ և նոյնպէս Աստուծոյ Հոգիով լիցուեցաւ: Հօլի դասընկերներէն մին կ'ըսէր թէ, անիկա իր հանդիպած մարդոց մէջ ամենէն մեծն էր:

Թերեւս օգտակար ըլլայ հոս յիշել Հոլի կեանքին չորս կանոնները:

Ա. Կատարելապէս Աստուծոյ հպատակիլ:

Բ. Անդադար Աստուծոյ առաջնորդութեանը սպասել:

Գ. Բացարձակապէս հնազանդիլ Անոր առաջնորդութեան:

Դ. Շարունակ գիտակից ըլլալ թէ մենք մեզմէ բան մը չենք կրնար ընել:

Զարմանալի չէ որ Աստուծոյ ալ զայն բարձրութենէ բարձրութեան առաջնորդեց: Իր գրութիւններէն մէկին մէջ օր մը կ'ըսէր՝ «Ինծի կը թուի թէ Եփես. Գ. 14-21 ի սանդուխն ի վեր կ'ելլեմ»: Ինչ սքանչելի սանդուխ: Աստուծոյ Հոգին միայն կարող է զմեզ այդ սանդուխն ի վեր առաջնորդել:

Աստուծոյ բոլոր իրեն հետեւողները կը հրաւիրէ ըսելով, «Թող իմ գործութեանս ապաւինին» (Եսայ. ԻԷ. 5):

ԲԺՇԿՈՒԱԾ ԲՈՐՈՏԻՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ

Ղեւտացուց գիրքին ծէսերուն ուսումնասիրութիւնը ընդհանրապէս անտեսուած է՝ նոյնիսկ աւետարանական քրիստոնեաներէ: Իսկ արդիականները այս արարողութեանց մէջ կ'ուզեն տեսնել միայն՝ ոչ թէ Մովսէսի հապա յետագայ շատ մը դարերու հնարումները, որոնք հարկադրուած են հրեայ ժողովուրդին զիրարհաւանութեան խաբեւայ քահանաներու կողմէ՝ իրենց դասակարգային ազդեցութիւնը բարձրացնելու նպատակաւ: Բայց մենք, որ կը հաւատանք ամբողջ Աստուծաշունչին ներշնչման, այս խորհրդանշաններուն մէջ կը տեսնենք փրկութեան գործին նախատիպերը, ինչպէս նաեւ մկրտութեան եւ հաղորդութեան մէջ կը տեսնենք միայն խորհրդանշաններ՝ հաստատուած նոյն ինքն Տէրոջ մէջ, ներկայացնելու իր մահն ու յարութիւնը, եւ մեր յարութիւնը իրեն հետ ու մեր վերստին ծնած հոգիներուն անունը:

Յիսուս յայտնապէս ընդունեց ծէսերուն մովսիսական ծագումը: Իր մահուան նախընթաց շարժումն մէջ, ինք յայտարարեց հրէաներուն եւ իր աշակերտներուն, «Մովսէսի ավոտը դպիրները քի փարիսեցիները նստած են, ուրեմն ինչ

որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէք ու ըրէք, բայց անոնց գործերուն պէս մի ընէք, վասնզի կ'ըսեն ու չեն ըներ» (Մատթ. ԻԳ. 2, 3): Այսպէս Յիսուս կ'ընդունի եւ կը հաստատէ փարիսեցիներուն ուղղափառութիւնը՝ նշաւակելով հանդերձ անոնց կեղծաւորութիւնը: Այս բառերը, արտասանուեցան դպիրներուն ու փարիսեցիներուն երբ անոնք կը պատրաստուէին միայն մի քանի օր յետոյ զԱյն դահիճներուն մատնել: Ինչ ազդարարութիւն մեզմէ անոնց որ իրենց վարդապետական ուղղափառութիւնը փոճ ապահովութեան բարձ մը կ'ընեն իրենց համար:

Անտարակոյս, եկեղեցին սինակով չէ, մեզի համար զեւտական ձեւերը եւ արարողութիւնները շնչուած են. եկեղեցին պարտաւորուած չէ զանոնք կատարել, բայց պարտականութիւն ունի զանոնք սերտելու եւ յետագարձ ակնարկ մը նետելով՝ սքանչանալու աստուծային ծրուգրին գեղեցկութեանը, իմաստութեանը եւ կատարելութեանը վրայ: Հին Կտակարանը, մասնաւորաբար Աստուծոյ ժողովուրդին կրօնական հաստատութիւնը սերտելով կը տեսնենք այն մերկացուած հիմերը, որոնց վրայ կը կենայ շէնքը մեր «Ամենասուրբ հաւատքին»: Ուստի այս ուսումնասիրութիւնը մինակ պարտականութիւն մը չէ, հապա առանձնաշնորհում մը, շինութեան ուժեղ միջոց մըն է: Հին Կտակարանը, մասնաւորապէս Ղեւտական օրինագիրքը, նոյն ինքն Աստուծոյ գծուած պատկերագրքի մը պէս է «լուսանկարելու» համար աւետարանական ճշմարտութիւնները:

Այս օրուան համար կ'ուզէի սիրելի ընթերցողներուս սքանչացման առարկան դարձնել Ղեւտացուց գրքէն էջ մը, ուր կան ըստ իս հրաշալի դասեր եւ խիստ մեծ պատճառներ երախտագիտութեան եւ երկրպագութեան: Այդ է բորոտին միսքութիւնը (Ղեւ. ԺԴ): Կարդացէք Աստուծաշունչին այդ գլուխը. կրնայիք նոյնիսկ այս տեղ թողուլ յօդուածս եւ շատանալ այս ներշնչուած էջով: Հոն պիտի գտնէք ինչ որ ես ինքս տեսայ. սքանչելի մեկնութիւն մը Պօղոս առաքեալի խօսքերուն. — «Բայց լուսյուլեցաք, բայց սրբուեցաք, բայց արդարացաք Տէր Յիսուսի անունովը ու մեր Աստուծոյն Հոգիովը» (Ա. Կոր. Զ. 11):

* * *

Բորոտը՝

Անիկա ստորնագոյն դասու մարդը, գարշելի էակը, իր ընտանիքին անարգանքը, ժողովուրդին սարսափն էր: Վստուած հանրութիւնէն, անիկա պէտք էր ապրէր մինակ կամ ուրիշ բո-

րոտներու ընկերակցութեան մէջ, հեռու ամէն բնակավայրէ: Ոչ մէկ տեղ անոր համար տանը, տաճարին եւ սիրակոկին մէջ:

Եւ ահա հակառակ ամէն անյուսութեան, հրաշքով այս թշուառներէն մէկը բժշկուած էր:

Բժշկուած ուղղակի Աստուծմէ, առանց ոեւէ մարդկային միջամտութեան: Ո՛հ, շնորհք անակընկալ ու անիմանալի. բայց որպէսզի կարենար այս մարդը վերստին իր տեղը գրաւել ընկերութեան մէջ, պէտք էր որ իր բժշկութիւնը ըստ օրինի հաստատուէր քահանայէն, որ ունէր քաղաքական ու կրօնական ամէն իշխանութիւն: Նկատեցէք որ այդ քահանան գործ մը չունէր այս բժշկութեան մէջ. ան կրնար զայն միայն ստուգել եւ հրատակել: Ուստի մարդը կ'ենթարկէր խիստ երկիւղած քննութեան մը, վասնզի կեղծ բժշկութիւն մը անաւոր հետեանքներ կրնար ունենալ հասարակութեան համար...

Բժշկուած, բժշկուած, բժշկուած.

Երեւակայեցէք այս մարդուն եւ իրեններուն ուրախութիւնը: Զայն կը շրջապատեն, կը շնորհաւորեն, բայց չեն համարձակիր տակաւին զրկելով խառնուիլ: Ան մեռելներէն յարուցեալ մըն է, բայց բոլորովին վստահ ըլլալու է թէ վերջնականապէս եւ կատարելապէս յարուցեալ է:

*

* *

Աւելի հեռուն երթալէ առաջ հարցնենք թէ ինչի՞ կը համապատասխանէ հոգեւոր տեսակէտով այս հիւանդութիւնն ու իր բժշկութիւնը:

Հագուոյն բորոտութիւնը, մեղքն է: Ժառանգական, փոխանցիկ, մահացու հիւանդութիւն: Հիւանդութիւն, որ ամէն բանէ աւելի անկախ չէ մեր կամքէն. որովհետեւ մեղաւորը, բորոտ մըն է որ ինքզինքը անմաքուր չուզեր ճանչնալ, կամ ինքզինքին կը հաւնի իր պղծութեանը մէջ եւ չփափաքիր անկէ բժշկուած ըլլալ: Մեղաւորը միայն հիւանդ մը չէ, այլ նաեւ պատժու պարտ մը:

Իսկ բժշկութիւնը Աստուծոյ շնորհաց գործն է. Ան է որ մեղաւորին սրտին մէջ զղջում յառաջ կը բերէ, Ան է որ աշխարհի ըլլալէն առաջ պատրաստած է փրկութեան միջոցը—Իր Միածին Որդւոյն խաչը.— Ան է որ իր խօսքովը եւ Սուրբ Հոգով կը ծնցընէ հաւատքը՝ զղացող հոգւոյն մէջ: Ոեւէ քահանայ ոչինչ է այդ գործին մէջ: Հովիւները, եկեղեցւոյ հաւատացեալ անդամները, անոնք իսկ ներում գտած մեղաւորներ են, բժշկուած բորոտներ. իրենց միջամտութիւնը այսքան է. ճանչցնել մեղաւորներուն

Աստուծոյ ողորմութիւնը եւ՝ երբ անոնք ճշմարտապէս ապաշխարած են՝ հաստատել հրաշալի փոփոխութիւնը զոր շնորհքը անոնց մէջ երեւան բերած է:

*

Բժշկութիւնը ըստ օրինի հաստատուելու համար, քահանան կենդանի ջրով լեցնել կուտար հողէ աման մը: Յետոյ կ'առնէր երկու ողջ թռչուն, եղեւնափայտ, կրկնակի կարմիր եւ զուպայ: Թռչուններէն մէկը (հրեայ մեկնիչները կ'ըսեն, երկուքն գեղեցկագոյնը) կը մորթուէր եւ արիւնը կը խառնուէր ամանին կենդանի ջուրին հետ: Միւս թռչունը կը թաթխուէր արիւնտած ջուրին մէջ ուր կը թրջուէին նաեւ եղեւնափայտը, կրկնակի կարմիրը եւ զուպան, ու ապա քահանան այդ ջուրէն եօթը անգամ կը սրսկէր բժշկուած բորոտին վրայ եւ զայն կը յայտարարէր մաքուր: Յետոյ ողջ թռչունը դէպի դաշտը կ'արձակէր. ան կ'սկսէր թռչիլ, բանալով իր ծիրանափայլ թեւերը եւ կ'անհետանար երգելով կապոյտ երկինքին խորը...

Կը տեսնէ՞ք ինչ կը ներկայացնէ այս գոհագործումը եւ ազատ արձակումը:

Այս երկու թռչուններէն մին կը ներկայացնէ խաչեալ Բրիստոսը, միւսը՝ յարուցեալ եւ երկինք ելած Բրիստոսը: Միեւնոյն ատեն անոնցմէ մէկը կը ներկայացնէ մեղաւորը՝ իր յանցանքներուն ու մեղքերուն մէջ մեռած, իսկ միւսը, մեղաւորը՝ Բրիստոսի հետ յարութիւն առած, վերստին ծնած, յաւիտենական կեանքի ժառանգորդ եղած:

Ջուր եւ արիւն հոսեցան Գողգոթայի վրայ. «Ասիկա է որ եկաւ ջուրով եւ արիւնով, այսինքն Յիսուս Բրիստոս, ոչ թէ միայն ջուրով, հապա ջուրով ու արիւնով» (Ա. Յովհ. Ե. 6): Ջուրը կը մաքրէ, արիւնը կը քաւէ: Եղբայրը կը մեռնի որպէսզի իր եղբայրը ապրի: «Վասնզի ան որ կը սրբէ ու ան որ կը սրբուի, ամէնն ալ մէկէ են. անոր համար ինք ամօթ չսեպեր եղբայր կոչել զանոնք» (Եբր. Բ. 11):

Ամէնը այն է: Ոչ տակաւին: Պէտք էր որ մէկ սխալանքի կարելիութիւն ըլլար. պէտք էր նաեւ որ բժշկուած բորոտը ժամանակ ունենար խորհելու իրեն եղած շնորհքին վրայ եւ լաւ մը գիտակից ըլլալ թէ ինք միայն բժշկուած չէր այլ նաեւ ներուած, վասնզի եթէ բորոտութիւնը մասնաւոր մեղքի մը հետեւանքը չէր, անտարակոյս մէկն էր մեղքին պտուղներէն ընդհանուր առմամբ: Պէտք էր անոր համար մատուցուէր որպէս քաւութեան զոհ՝ զառնուկ մը, որուն ար-

իւնը հրապարակաւ կը հաստատէր թէ անոր պարտքը վճարուած է վերջապէս եւ ան վերջատին ընդունուած է Աստուծոյ ժողովուրդին հաղորդակցութեան մէջ:

Արիւն ալ ահանջին բլթակին վրայ, արիւն ալ ձեռքին մեծ մատին վրայ, արիւն ալ ոտքին մեծ մատին վրայ... Գլուխէն մինչեւ ոտքը մարդը պէտք էր օծուած ըլլար փրկարար արեամբ: Այս մարդուն բոլոր մտային կարողութիւնները, բոլոր ֆիզիքական ուժերը, բոլոր զործերը յետ այսու եւ վերջնականապէս նուիրուած էին Աստուծոյ ծառայութեան:

Եւ արեան օծումէն վերջ իւրի օծում. այս ալ վերանորոգուած մարմնոյն միեւնոյն անգամներուն վրայ: Արիւնը ամէնը քաւած էր, եւ իւրը կը նուիրէր ամէնը, որոնց դպած ու լուացած էր արիւնը:

Եւ ահա ինչ որ այս բոլորին մէջ ինձ թուեցաւ ամենասքանչելին, ամենազսեմը: Այս օծութիւնը առանց խտրութեան բոլոր հրեաներուն շնորհուած էր: Իսրայէլի մէջ ամէնը «Տէրոջը օծեալը» չէին բառին տառական իմաստով:

Իսրայէլի մէջ կ'օծուէին միայն...

Քահանաները,

Թագաւորները,

Մարգարէները եւ...

Բժշկուած փորձուները:

Մէկ անգամէն ողորմելին կ'անցնէր ամենէն բարձր կարգը: Ազնուապետութեան մաս կը կազմէր: Ան կենդանի հրաշք մըն էր, աստուածային ամենէն երեւելի շնորհքին յայտնի առարկան... Ո՛հ, ի՛նչ ուրախութիւն, ի՛նչ երախտագիտութիւն, ի՛նչ սէր կ'ողողէր իր սիրտը եւ իրեններունը:

Եղբայրներ եւ քոյրեր, խոնարհութեամբ փառք տանք Աստուծոյ որ մեզ ըրած է «Ընտիր ցեղ մը, թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ մը, որպէսզի քարոզենք Անոր առաքինութիւնները, որ մեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց» (Ա. Պետ. Բ. 9), ոչ թէ հալկաւակ այն իրողութեան որ մենք հին բորոտներ ենք, այլ նոյն իսկ այդ պատճառաւ:

«Անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, եւ մեզ թագաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու իր Հօրը. Անոր փառք եւ զօրութիւն յաւիտեանս: Ամէն» (Յայտ. Ա. 3, 6):

Թարգ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ էթիէն

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ

(H. A. Ironside)

«Մարդիկ մի նեղէք անոնց հարցնելով թէ ինչպէ՞ս, ե՞րբ եւ ո՞ւր դարձի եկած են. միակ կարեւոր կէտը անոնց ներկայիս ո՞ւր գտնուին է», կ'ըսեն շատեր: Սակայն այս առարկութիւնը Ս. Գրային չէ. հոգիներ հանդարտ խղճով եւ զոհ սրտով անգիտակցաբար դէպի յաւիտեանական կորուստ կը տանի: Տէր Յիսուս կ'ըսէ, «Եթէ դարձի չգաք եւ տղոց պէս չըլլաք, երկինքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք»:

Ուրեմն Աստուծոյ դառնալ անգիտակցաբար տեղի ունենալիք դէպք մը չէ՝ այլ գիտակից, իրական փորձառութիւն մը: Ըսել չեմ ուզեր թէ ամէն մէկ անհատ որ դարձի եկած է, գիտէ իր դարձին օրը, ժամը եւ վայրկեանը: Երիտասարդներ եւ երիտասարդուհիներ շատ անգամ երկար ժամանակ ինքնավստահութիւն մշակելէ վերջ՝ հետզհետէ կը հասկնան անձնավստահութեան յիմարութիւնը եւ փրկուելու համար միամիտ հաւատքով Քրիստոսի հաւատալու պարզութիւնը: Այն վայրկեանին որ քու վստահութիւնդ Անոր վրայ կը դնես, դարձի կուգաս: Շատեր այս ճշմարտութեան անտեղեակ ըլլալով կը շուարին «Ե՛րբ եւ ո՞ւր դարձի եկած եմ» հարցման պատասխանելու:

Գալով «Ինչպէ՞ս դարձի եկած եմ», հարցման պատասխանը շատ դիւրին է: Որչափ ալ որ մարդոց փորձառութիւնները տարբերին այս կէտին մէջ, դարձի գալու միայն մէկ կերպ կայ: Դարձի գալ կը նշանակէ «ես»էն «Քրիստոս»ի դառնալ. դադրիլ որեւէ անձնական արժանիքի վստահելէ եւ մի միայն Տէր Յիսուսի վստահիլ: Այս փոփոխութիւնը տեղի ունեցած է քու կեանքիդ մէջ: Եթէ անձիդ վրայ ունեցած բոլոր վստահութիւնդ Քրիստոսի վրայ փոխադրած ես, դուն դարձի եկած անհատ մըն ես: Եթէ քու տեսութիւնդ ուրիշներու տեսութենէն կը տարբերի, մի թողուր որ տարակոյսներ ու վախեր քեզ նեղեն: Մի թողուր որ Սատանան քու անարժանութիւնդ առջեդ բռնելով քեզ տանջէ, կամ հաւատքիդ շիտակ կամ սխալ ըլլալուն մասին տարակոյսներ արթնցնելով զքեզ տազնապեցնէ: Աստուած ամէն մէկ մարդու համար միեւնոյն կաղապարը չգործածեր երբեք: Ս. Գիրքին մէջ չենք գիտեր մէկը, որուն հոգեւորապէս արթննալուն եւ քրիստոսի առաջնորդութիւնը կերպը ուրիշի մը դարձին ճիշդ նշման ըլլայ: Կարեւոր է նաեւ չմոռնալ թէ եթէ

ՄԵԻԿԱ ՊԵՏԻ ԿՈՉՈՒՐ
ՍՔԱՆՁԵԼԻ, ՀՁՕՐ ԱՍՏՈՒԱԾ

«... ահա ամէն բաները նոր կ'ընեմ...» Յայտ ԻԱ. 5

Ես չեմ ճանչնար տիեզերքի մէջ ՎԱՅԻ՝ մ'այնքան ցած եւ անշուք՝
Որքան գոմը Բեթլեհեմի, ուր կ'ապրէին կով ու գոմշուկ:
— Բայց երբ Յիսուս մտուն ընտրեց Իրեն որպէս ծննդավայր՝
Ողջ մարդկութեան համար այդ տեղն դարձաւ կեդրոն եւ սրբավայր:

Ես չեմ ճանչնար ընկերութեան մէջ ԴԱՍԱԿԱՐԳ մ'այնքան ստրուկ՝
Որքան դասը մաքսաւորաց, անարգ տգէտ, իրաւագուրկ:
— Բայց երբ Յիսուս որպէս ծառայ նուիրուեցաւ այդ շարքերուն՝
Կոյր ամբոխն այդ ծնաւ հզօր բանակը սուրբ հերոսներուն:

Ես չեմ ճանչնար ՆՇԱՆ մ'այնքան զարհուրելի, ստոր եւ սեւ՝
Որքան արնոտ Գողգոթայի գլխուն ցցուած խաչն անարեւ:
— Բայց երբ Յիսուս զամուսնեցաւ հոն, խուժողութ այդ փայտը անէծքի՝
Դարձաւ իտէալը մարդկութեան եւ պատուանիշ վսեմ փառքի:

Ես չեմ ճանչնար ՀԱՐՑ մ'այնքան մուրթ, ցուրտ եւ կծու եւ վհատիչ՝
Որքան մահը, որ կը քաղէ մեր ծաղիկները էն մոգիչ:
— Բայց երբ Յեսուս մեռաւ ի սէր նպատակին իրագործման՝
Յայնժամ մահն ալ դարձաւ վսեմ դափնեզարդ դուռն անմահութեան:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

դուն որեւէ անձնական արժանիք ունենայիր Փրկչին պէտք պիտի չունենայիր: Բուն իսկ քու անարժանութիւնդ է որ զքեզ Անոր, միակ Արժանաւորին, կը մղէ: Ուստի թող որ հոգիդ Անով զբաղի ու ոչ թէ քու ծրագիրներովդ ու զգացումներովդ:

Շիտակ կամ սխալ հաւատքը ունենալու նըկատմամբ՝ կ'ուզենք շեշտել թէ «Շիտակ հաւատքը» չէ որ կը փրկէ, այլ «Հաւատք շիտակ Անձնաւորութեան» վրայ: Կրնաս ամենէն զօրաւոր հաւատքէն ունենալ քու անձիդ, կամ քահանային, եկեղեցիին, սուրբ խորհուրդներուն, տեսիլքներու եւ երազներու վրայ ու յաւիտեան կորսուիլ, մինչդեռ Աստուծոյ Դառին, Քրիստոս Յիսուսի վրայ զբաղած ամենէն տկար հաւատքը կարող է զքեզ յաւիտենապէս փրկել:

Ամէն անգամ որ Պօղոս առաքեալ իր դարձին պատմութիւնը կ'ընէ, կը տեսնենք թէ Աստուած ինչպէս անոր յայտնած էր թէ ինքնադարձութեամբ ու բնական կրօնասիրութեամբ անկարելի էր փրկութիւն գտնել, մինչդեռ Քրիստոսի վստահելով եւ զԱյն դաւանելով մարդ բացարձակապէս վստահ կ'ըլլայ յաւիտենական փրկելութեան: Այն հոգին, որու միակ նպատակն ու առարկան Քրիստոս է, իրապէս Անոր դարձած է:

Ուստի երբ կը հարցնենք թէ, «Ինչպէ՞ս, ո՞ր կամ ե՞րբ դարձի եկար», ըսել կ'ուզենք, ինչպէ՞ս առաջնորդուեցար քու վստահութիւնդ Քրիստոսի վրայ դնելու: Ե՞րբ եկար այն զիտակցութեան թէ Քրիստոս միայն ըլլալու է քու Փրկիչդ: Ո՞ր գտար այդ փաղցր հանգիստը անոր մէջ: Եթէ շաբաթներ ու ամիսներ տեւեց մինչեւ որ Անոր հզօր բազուկին փառելով եւ Անոր կատարած գործին վստահելով՝ հանգիստ դտար, մի նեղուիր որ որոշ ժամ մը կամ օր մը չես կրնար յիշել, այլ համարձակութեամբ զայն իբրեւ քու Փրկիչդ ընդունէ:

Անոր դառնալէ վերջ շատ բաներ կրնան քեզ նեղել ու շուարեցնել. շատ մը խնդիրներ կրնան մոթ ըլլալ քեզի, անձնական պայքարներդ կըրնան քեզ երբեմն բոլորովին յուսալքել, սակայն մի թողուր որ ոեւէ բան քու դարձիդ նկատմամբ կասկածներ արթնցնէ մէջդ: Վստահ եղիւր թէ Աստուած հետզհետէ ամէն բան պիտի պարզէ քեզի եւ Իր գործը զլուխ հանէ քու մէջդ: Սատանան այս լուր ղիտէ եւ ուրեմն կը ջանայ տարակոյսներով քու երջանկութիւնդ յափշտակել, բայց Աստուծոյ խօսքը կ'ըսէ «Սատանայի հակառակ կեցէք ու անիկա ձեզմէ պիտի փախչի»:

«ՈՒՍՏԻ ՏՕՆ ԿԱՏԱՐԵՆՔ»

(Ա. ԿՈՐ. Ե. 8)

Աստուած սէր է: Այս բանին մէջ Աստուծոյ սէրը մեր վրայ յայտնի եղաւ որ Աստուած Իր Միածին Որդին աշխարհ զրկեց... մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու:

Ա. Յովհ. Դ. 8.10

ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է

Աստուած սէր է: Ոչ թէ միայն կը սիրէ, հապա սէր է: Սէրը աչքով տեսնուելիք կամ ձեռքով շօշափուելիք առարկայ մը չէ. քերականական լեզուով սէրը վերացական գոյական մըն է: Բայց կրնանք նոյն լեզուով ըսել թէ Աստուած սիրոյ նիւթական գոյականն է: Աստուած սիրոյ մարմնացումն է, յայտնութիւնը, անձնաւորումը: Աստուած Ինքնին Իր մէջ իբրէն է: Մենք հողէ բաղկացած ենք մարմնապէս, և Աստուած սէրէ բաղկացած է ամբողջապէս: Մարդկային միտքին բացատրելու համար եթէ պէտք ըլլար Աստուծոյ ալ մարմնի անդամներ վերագրել (ինչպէս օրինակ Ս. Գրիգոր կ'ըսէ, Աստուծոյ աչքերը, Աստուծոյ ականջները, երեսը, եւն), պէտք է նաեւ անհրաժեշտօրէն ըսել, Աստուծոյ աչքերը, ականջները, երեսը, բազուկը եւն. սէր են: Աստուած սէր է: Աստուծոյ սէրը նաեւ սուրբ է որպէս Անոր էութիւնը, նոյնպէս յաւիտենական եւ անհուն: Ինչպէս նկարագրած է մէկը.—

«Եթէ աշխարհի բոլոր ծովերը մեկան ըլլային,
Եւ ցորենի ամէն ցօղուն մէյմէկ գրիչ,
Եւ բոլոր մարդիկ մէյմէկ գրագիր,
Ու երկինքի կապոյտ կամարը մազադաթ,
Աստուծոյ սէրը նկարագրելու համար,
Այդ կաղամարները պիտի չորնային,
Եւ զրագիրները յոգնէին
Ու երկնական մարը ծայրէ ծայր պիտի լեցուէր,
Բայց Աստուծոյ սիրոյն նկարագրութիւնը
պիտի չլմնար:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՍԻՐԷ

Սէրը ինքն իր մէջ յոգնակի է ու նաեւ կենդանի եւ զործունեայ: Աստուած յաւիտենական և անհուն է, և կրնար նա իբր այդ առանձինն ըլլալ: Բայց Աստուած մէկ է. ուրեմն սէր ըլլալու համար հարկ էր որ Աստուած ինքն իր մէջ յոգնակի ըլլար: Աստուծոյ գոյութիւնն ու յայտնութիւնը մեզի ցուցնող Ս. Գրիգորը զԱստուած իբր միասնական Երբորդութիւն կը յայտնէ: Եւ մեր կէտին գալու համար՝ Հայրն Աստուած կը սիրէ յաւի-

տենական սիրով մը Որդին Աստուած: Կող. Ա. 13ի «Իր սիրելի Որդւոյն» բառերը կարելի է թարգմանել նաեւ «Իր սիրոյն Որդին» «Մէկը երբեք զԱստուած տեսած չէ, բայց Միածին Որդին որ Հօրը ծոցն է, Անիկա պատմեց» (Յովհ. Ա. 18): Այո, «Հայրը կը սիրէ Որդին», (Յովհ. Ե. 20):

Աստուած սէր է իբր յաւիտենական էութիւն:

Աստուած կը սիրէ՝ եւ Անոր սիրոյն արժանի առարկան Իր Միածին Որդին է յաւիտեան:

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ՄԵՐ ՎՐԱՅ ՅԱՅՏՆԻ ԵՂԱԻ

Աստուած մեզի անտեսանելի է. Անոր ճամբաները մեզի անքննելի են: Աստուծոյ սէրն ալ իբր Անոր էութիւնը մեզի անտեսանելի եւ անքննելի պիտի մնար. բայց նա ուզեց Իր սէրը մեզի յայտնի ընել: Նա արդէն մեզ կը սիրէր դեռ Իր սէրը մեզի Հյայտնած: Հոով. Ե. 8 կ'ըսէ, «Աստուած Իր սէրը զոր մեր վրայ ունէր, յայտնեց», Աստուած մարդուն կ'ըսէ, «Քեզ յաւիտենական սիրով սիրեցի», (Երեմ. ԼԱ. 5): Աստուած... Քրիստոսով... մեզ... աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց», (Եփես. Ա. 3-4): Աստուած ուզեց Իր սէրը մեզի յայտնել: Նա չբաւականացաւ մեզ սիրել վերացական եւ անտեսանելի սիրով մը. Աստուած Իր սէրը զոր մեր վրայ ունէր յայտնեց:

Աստուած այնպէս... սիրեց աշխարհը, մինչեւ... Իր Միածին Որդին առաւ:

Այն սէրը ո՞վ պիտի Հափէ,
Եւ խորութիւնը հասկնայ.
Ամենաբարձրը սէրովբէ
Ի զուր քննել պիտի ջանայ:

ԱՅՍ ԲԱՆԻՆ ՄԷՋ...

Աստուած Իր սէրը մեր վրայ յայտնի ընելու համար Իր Միածին Որդին աշխարհ զրկեց: Միածին Որդին կը նշանակէ մէկ հատիկը. ուրիշ չունէր: Աստուծոյ յաւիտենական սիրոյն առարկան եղող Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը: Եւ եթէ կարելի ըլլայ — մարդկօրէն խօսելու համար — աստիճանաւորում մը ընել Աստուածութեան բոլոր լեցունութեան՝ կրնանք ըսել թէ Քրիստոսի մէջ ամենէն բարձրը կը կենայ Աստուածութեան եւ աստուածային սիրոյն բոլոր լեցունութիւնը: Հայրը զըրկեց եւ Որդին յօժարակամ եկաւ: «Ասով գիտցանք Քրիստոսի սէրը, որ Անիկա Իր կեանքը մեզի համար զրաւ», (Ա. Յովհ. Գ. 16): Յիսուս ըսաւ, «Ես Իմ կեանքս կը դնեմ (ոչխարներուն համար) մէկը չհաներ զանիկա Ինձմէ, հապա Ես կը զը-

նեմ զանիկա Ինքիրմէս», (Յով. Ժ. 17-18): «Ասկէ աւելի մեծ սէր մէկը չկրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներուն համար դնէ», (Յովհ. Ժ. 13): «Աստուած Իր սէրը զոր մեր վրայ ունէր յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ», (Հով. Ե. 8-9):

Անոր սէրն է անճառ անբաւ,

Սէրն զոր Յիսուս ինձ ցոյց տուաւ՝

Սէր է անճառ, անբաւ:

ՄԵՐ ՄԵՂՔԵՐՈՒՆ ՔԱՒՈՒԹԻՒՆ ԸՆԴԱՆՈՒ

Սիրելի ընթերցող, Աստուծոյ սիրոյն յայտնութիւնը եղող Յիսուս Քրիստոս քու մեղքերուդ քաւութիւնն եղա՞ծ է: Օր մը փրկեալներու անթիւ բազմութիւնը փառաւորեալ Քրիստոսի շուրջ համախմբուած պիտի երգեն, «Մորթուեցար ու մեզ ծախու առիւր Աստուծոյ Քու արիւնովդ», (Յա. Ե. 9): «Մեզ սիրեց, ու մեզ Իր արիւնովը մեր մեղքերէն լուաց», (Յայտ. Ա. 5): Յիսուս քեզ Իր արիւնովը քու մեղքերէդ լուալ կ'ուզէ: Յիսուս ծնաւ՝ խաչին վրայ մեռնելու համար, որպէսզի Իր արիւնովը քու մեղքերդ լուայ: Այն Յիսուսը, որուն ծնունդը պիտի տօնես քանի մը օրէն՝ քու մեղքերուդ քաւութիւնն եղա՞ծ է: Կը յիշեմ, մանուկ հասակիս ամէն տարի Քրիստոսի ծննդեան տօնին կ'ուրախանայի նոր հազուատներ հագնելով, նուէր ստանալով, անուշեղէն ուտելով եւն: Յետոյ՝ երբ գիտակից տարիքս հասաւ, այլեւս այդ մանկական հաճոյքները չմնացին, և Ծննդեան տօնը իբր սովորութիւն, իբր յիշատակ, միայն անիմաստ զուարճանքի եւ վազանցի օր մը կը նկատէի: Բայց երբ Աստուած իմ քնացած հոգիս արթնցուց, եւ ապաշխարելով մեղքերուս թողութիւնը ստացայ՝ անոր յաջորդող Ծննդեան տօնը բոլորովին նոր, աննկարագրելի, անմահ ուրախութեան օր մըն էր: Առաջուան Ծննդեան տօները դիակներու կը նմանէին, բայց այս անգամուանը կարծես կեանք ունեցող էակ մըն էր՝ որուն հետ կը յարարեի եւ կ'ուրախանայի: Դուն ալ քանի մը օրէն Յիսուսի ծնունդը պիտի տօնես՝ բայց իբր ի՞նչ պիտի տօնես զայն: Յիսուս աշխարհ եկաւ քու մեղքերուդ թողութիւնը ըլլալու: Եկուր հիմա Անոր խաչին առջեւ զղջումով ծնրադրէ ու քու մեղքերուդ թողութիւնը ըստացիր: Հիմա եկուր և Յիսուսի ծննդեան տօնէն առաջ կերպով մը զործնականապէս Զատիկուան տօնը տօնած եղիր: Յիսուսի ծնունդէն առաջ Անոր մահը եւ յարութիւնը տօնէ հիմա: Յետոյ պիտի կարենաս նոր եւ հոգեւոր Ծնունդ մը տօնել: «Ուստի տօն կատարենք ոչ թէ հին խմորով եւ ոչ

թէ չարութեան ու անզգամութեան խմորովը, հապա անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացովը», (Ա. Կոր. Ե. 8):

Սիրոյն բարձունք, ո՛հ, ի՛նչ քաղցր են.

Շնորհաց խորերն ի՛նչ անյատակ.

Ա՛հ, ծրձէի ես Իր սէրէն,

Եւ ապրէի Իր թելոց տակ:

Վաղանս

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

ԳԻՐԲ ՂԵՒՏԱՅԻՈՑ

Վերջին ժամանակներու հրեաները «Քահանաներու օրէնքը եւ ընծաներու օրէնքը», կոչած են Հնգամատեանին երրորդ գիրքը: Այս, արքամարանական շարունակութիւնն է Ելից գրքին, վասնզի կը բացատրէ պաշտամունքին կանոնադրութիւնները որ սկսած էր Ելիցի մէջ: Մեր գրքին իբր բանալի ծառայող խորհուրդը Աստուածպետութեան մեծ խորհուրդն է: Աստուծոյ սըրբութիւնը ամենէն կարեւոր տեղն ունի: Սուրբ Աստուածն է որ կը պայքարի մեղքին դէմ, որ կ'ուզէր Իր ժողովուրդը մաքրել կրկին եւ կրկին պատուիրելով, «Ասուր եղէք, քանզի ես սուրբ եմ»,:

Այսպէսով Ան կը ջանայ կերտել Իր վեհաւնի խորանը, ձեւակերպել ժողովուրդին խղճմատանքը՝ միշտ Իրեն նպատակ ունենալով հասնիլ նաեւ համայն մարդկութեան խիղճին ու կեանքին ու նաեւ կրթել զանոնք: Ծէսերու նպատակն է մեղքին դէմ արթնցնել այն զգուսնքը որ անհրաժեշտ է մեղքէն փախչելու, քանի որ ան կ'ըսպառնայ կեանքին եւ կը վարձատրէ մահով: Անոնք ցոյց կուտան նաեւ Աստուծոյ զթութիւնը: Արիւնալի զոհերը կը յայտարարեն մեղաւորին մահուան արժանի ըլլալը, ու հաւատքը ներող Աստուծոյն ողորմութեան:

X

«Ղեւտացւոց գիրքը անգնահատելիօրէն արժէքաւոր է իբր խնամով պատրաստուած սիւստեմ մը, որ խորհրդապատկերներու տակ ցոյց կուտայ այն հիմնական զաղափարները որոնց վրայ հաստատուած է Քրիստոսի քաւարար զործը: Անոր լաւագոյն մեկնութիւնը ներշնչեալ գիրք մ'է, Երբայեցւոց թուղթը, որմէ կը սորվինք թէ օրէնքին այս մասը «Գալիք բաներուն

շուքն էր,։ Մասնաւորաբար քաւութեան մեծ օրուան արարողութիւնները ամէնքն ալ նախատիպեր էին, որոնք կը համապատասխանեն աւետարանին իրողութիւններուն, (Litton).

«Ղեւտացւոց գիրքին մէջի հրէական քահանայապետը նախատիպն է քրիստոնէից մեծ Քահանայապետին։ Հրէական սեղանին վրայ մատուցուած զոհերը՝ խաչին վրայ մատուցուած Քրիստոսի, միակ պատարագին. հրեայ բորոտը՝ բարոյապէս պղծուած ու նկարագրով աւրուած մարդուն, հրէից սքանչելի տօները՝ աւետարանին պարզ խորհուրդներուն եւ ի վերջոյ հրէական յոբելեանը՝ աւետարանական բովանդակ շրջանին, (Եսայ. ԿԱ. 1, 2) (Pinnock).

Առանց այս տեսակէտին, Ղեւտացւոց գիրքը անհասկնալի եւ անօգուտ կը դառնայ քրիստոնէից։ Այս հայեցակէտէն ուսումնասիրուելով սակայն, եկեղեցիին մնայուն գանձերէն մին է ան։ Արդէն կ'երեւի որ այս տուեալներուն վրայ կարելի է հիմնել լայն եւ խորիմաստ ուսումնասիրութիւն մը՝ պատշաճօրէն ներկայացնելու համար Ղեւտացւոց գիրքը։ Մենք պիտի բաւականանանք մասնանշելով անոր երկու գլխաւոր խորհուրդները— Մեղք եւ Փրկագործութիւն։ Այսինքն մարդը՝ իր կարօտութեան մէջ, ու Աստուած իր բնծայած դարմանումով։ Այսօր քննենք առաջին մասը.

ՄԵՂՔԸ

Մեղքին իրողութիւնը ակներեւ է. մեր գրքին մէջ յիշուած պատարագները մեղքին պատճառաւ ծագում առած են։ Քահանայից միջնորդական պաշտօնը նոյն բանը ցոյց կուտայ։ Բաժանման եւ զատուելուն օրէնքները բնոյթ ունէին մեղքին հանդէպ գիտակցութիւն արթնցնելու՝ հրաւիրելով ժողովուրդը որ մեղքէն բաժնուի Աստուծոյ չի գատուելու համար։ Մեր գիրքին մէջ մեղքին բնոյթը հետեւեալ կերպով յայտնուած է— Մեղքը նախ մարդը կ'արգիլէ Աստուծոյ մօտենալէ. պաշտամունքին բոլոր դրութիւնը ցոյց կուտայ թէ Աստուած հեռու է մարդէն։ Երբ ըսինք թէ Աստուծոյ ջանքն է մարդիկ իրեն մօտեցնել, արդէն ցոյց տուած կ'ըլլանք որ Նահեռու է մարդոցմէ։ Թէեւ բանակին կեդրոնը տակաւին սրբութեան սրբոց մէջ կը բնակէր, զատուած զանազան վարագոյրներով, որոնցմէ մտնելը պաշտպանուած էր խիստ օրէնքներով, որոնց դէմ մեղանշողը մահուան կը մատնուէր։ Աստուած մարդէն հեռու կը մնայ իր եւ մարդուն նկարագրին նոյնը չըլլալուն պատճառաւ։ Կսկծալի բան է զայս հաստատել, մանաւանդ

երբ կը յիշենք Ծննդոց յայտնութիւնը թէ մարդ Աստուծոյ պատկերովը ստեղծուեցաւ։ Դժբաղդաբար մեղքին անիծեալ ազդեցութիւնը ձեւափոխեց, եղծեց ու ապականեց այդ պատկերը։

Եթէ Աստուած կը ծածկուի մեղաւոր մարդէն, մարդն ալ իր կարգին կը հեռանայ Աստուծոյ եւ այսպէսով բացը կը լայնայ։ Աստուծոյ հեռացողը չճանչնար զԱստուծոյ, չի սիրեր զԱնիկա ու չի ծառայեր Անոր։ Անհաշուելի են մարդուն այս վիճակին հետեւանքները, վասնզի նա ընթացքով կը դիմէ վերջնական կործանումի։ Իր այս դիրքին մէջ անօգնական է մարդ, իր վերքը յուսահատական եւ անդարմանելի։ Հո'ս է որ մարդ չկրնար օգնել ինքիւրեն եւ ուրիշներու, հո'ս է որ մարդը միշտ կը ձախողի։ Հո'ս է սակայն որ Աստուած մարդուն կը հասնի իր ծրագրին եւ իր գործութեան համեմատող փրկագործութեամբը։

«Մեղքը անհրաժեշտօրէն Աստուծոյ դէմ գործուած յանցանքն է, ընդհանրապէս խնդրոյն այս կէտը միայն կը շեշտուի։ Թէեւ անհասկնալի իսկ թուի, մարդուն դէմ գործուած յանցանքն ալ Աստուծոյ դէմ մեղք է։ Մեղքը Աստուծոյ եւ իր արարածներուն դէմ գործուած բան մըն է, միակ ճամբան, որով մեր եղբօր դէմ գործուած մեղքին ատելի ըլլալը կրնանք վառ պահել մեր մէջ, այս է— յիշել թէ ան ալ Աստուծոյ կը վերաբերի։ Եթէ իւրաքանչիւր դէմքի վրայ նշմարենք Աստուածային յարաբերութեան պատկերը, կը յիշենք որ եղբօրը փոստել Աստուծոյ փոստել է։ Այս տեսակէտն է միայն որ կրնայ զմեզ գործուած սխալէն զղջման առաջնորդել եւ մեր շիտակը ընելու լաւագոյն դրդապատճառը կազմել։ Այս բոլորը ի վերջոյ Քրիստոս խտացուց իբր օրէնքին ու մարգարէութեան լրումը, ըսելով, «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտէդ, քու բոլոր անձէդ եւ քու բոլոր միտքէդ եւ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս»։ Դաւիթ լաւ թափանցեց մեղքին իսկական նշանակութեան երբ զոչեց, «Քեզի, միայն Քեզի դէմ մեղանշեցի»։ Այս հիմնական գիտութիւնն էր որ իր մէջ արթնցուց Բերսաբէի եւ Ուրիայի դէմ գործուած սխալին բուռն գիտակցութիւնը։ Մարդուն սըրտէն վերցուր այն իրողութիւնը թէ ինք Աստուծոյ դէմ կը մեղանշէ եւ ան շուտով անփոյթ պիտի դառնայ Բերսաբէի կամ Ուրիայի նրկատմամբ» (Մօրկըն)։

X

Ղեւտացւոց գիրքին մէջ լուսարձակ գիծ մը կայ որ զարմանալի կերպով երեւան կը հանէ

մեղքին բնոյթը եւ տարողութիւնը: Աստուծոյ սուրբ ըլլալուն իրողութիւնն է այն: «Վասնզի Ես սուրբ եմ»ը զարհուրելի եւ շլացուցիչ լոյսի մը նման զբոշմուած է զիրքին ամէն մէկ էջին վերայ: Երբայազէտներ կը հաստատեն թէ սուրբ բառը իր զանազան երանգներով 150 անգամէ աւելի գործածուած է այս զիրքին մէջ: Եթէ մօտէն հետեւինք այն իրողութեան, լաւ եւս պիտի գիտակցինք մեղքին ահաւորութեան, պիտի կրնանք հասկնալ թէ ինչո՞ւ... մեղքը Աստուծոյ եւ մարդոց միջեւ բաժանում կը ձգէ: Այս լոյսին մէջ է որ կրնանք ճանչնալ ու զնահատել Աստուծոյ փրկագործութիւնը. այս լոյսին մէջ է որ կրնանք տեսնել մեղսագրաւ մարդկութեան կործանման պատճառը: Պօղոս առաքեալ խորապէս կը գիտակցէր այս իրողութեան, երբ հաւատքով արդարացման մասին իր անզուգական տեսութիւնները գրելէ առաջ, Ս. Հոգիով շարժւած կը հաստատէր, «Ամէնը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակասած են»:

(Մնացեալը յաջորդով)

Փարիզ

Զ. Բ. ՊՈԽՏԱՔԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱՆ

ՈՒՐԱՅՈՒՄԷՆ ԵՏՐԸ

Պետրոս հազիւ երեք անգամ ուրացած էր Յիսուսը, «Իսկոյն հաւը խօսեցաւ եւ Տէրը դարձաւ Պետրոսի նախեցաւ» (Ղուկ. ԻԲ. 61): Աքաղաղին կանչը եւ Յիսուսի ականարկը յիշեցուցին Պետրոսի թէ Տէրը մարգարէացած էր իր ուրացումը մանրամասն պարագաներով իսկ եւ զինքը ժամանակին զգուշացուցած: Եւ այդ միջոցաւ Տէրը վերականգնեց ու խորացուց Պետրոսի խորտակումը հաւատքը. անիկա սկսաւ դարձեալ հաւատալ թէ Յիսուս Աստուծոյ Սուրբը, Արդարը, Որդին է, թէեւ Անիկա այդ ատեն կը ծաղրուէր, կը թքնուէր եւ կը ծեծուէր եւ քիչ ետքն ալ պիտի խաչուէր: Հաւատաց նաեւ Անոր անսահման սիրոյն զէպի զինքը: Թէեւ ինքը զԱյն ուրացած էր, բայց Ան զեռ չէր ուրանար զինքը, ընդհակառակն կը զօրգոյրար իր վրայ եւ անտեսելով իր անհուն տառապանքը՝ բազմութեան մէջ կը փնտռէր եւ ազատել կ'ուզէր զինքը — ապերախտ մոլորեալը — իր յուսահատութենէն ու տառապանքէն, որ զինքը «Յորենի պէս խաբբաւել» կը շահար (Ղուկ. ԻԲ. 31):

Պետրոս չի դիմացաւ Անոր սիրագեղ ականարկին, փշուռեցա՛ւ, հալեցա՛ւ: Ուստի «Դուրս ել-

լելով դառնապէս լացաւ» (Ղուկ. ԻԲ. 62): Հացա՛ւ իր ապերախտութեանը վրայ, լացա՛ւ իր տառապող Տէրոջ դառն վիշտերուն վրայ ծանրագոյն վիշտ մըն ալ իր կողմէն աւելցուցած ըլլալուն համար, լացա՛ւ իր բոլոր մեղքերուն վրայ: Քանզի թէեւ անիկա իր աշակերտութեան սկիզբն իսկ տեսած էր իր մեղքերը ու աղաղակած, «Տէր, իմ քովէն մէկդի գնա, քանզի ես մեղաւոր մարդ մըն եմ» (Ղուկ. Ե. 8), բայց հիմա անոր ի տես իր ապերախտութեան ու Յիսուսի սիրոյն հիմնական ապրումն ունեցաւ թէ ի՞նչ ահաւոր բան է մեղքը: Այդ պարագային առաջին անգամն ըլլալով տեսաւ նաեւ թէ Յիսուսի խաչը Աստուծոյ ծրագրին համաձայն էր եւ անհրաժեշտ՝ իր եւ բոլոր մարդոց մեղքերու քաւութեան համար: Ուստի հաշտուեցաւ իր Տէրոջ մահուան հետ, որու դէմ իր բոլոր հոգիովը ըմբոստացած էր իր աշակերտութեան առաջին օրերէն ի վեր:

Այսքանը ըլլալէն ետքը, այլեւս զիւրին էր դարձեալ դառնալ զէպի իր Տէրը, յիշելով մանաւանդ որ Ան իր ուրացումը նախապէս տեսնելով հանգերձ՝ չէր վռնտած զինքը աշակերտներու շրջանակէն, հապա ներած էր իրեն ուրացումէն առաջ, եւ աղօթած որ ետքը վերականգնի իր հաւատքին մէջ ու հաստատէ իր եղբայրներն ալ (Ղուկ. ԻԲ. 32): Ուստի Պետրոս Յիսուսի յանդիմանական բայց սիրալից ականարկին ազդեցութեամբ թէեւ տեսաւ իր մեղքի մեծութիւնը ու զղջաց անոր վրայ, բայց միեւնոյն ատեն ապրումն ունեցաւ Անոր անհուն շնորհքին եւ հաւատքով ընդունեց Անոր մատուցած քաւութիւնը:

Յուզաւ ալ տեսաւ իր մեղքին ահաւորութիւնը, նոյնիսկ զեղջի ալ եկաւ ըսելով, «Ծեղա՛յ որ անմեղ արիւն մատնեցի» (Մատ. ԻԷ. 3-5) սակայն չկրցաւ կրկին իր ճամբան դտնել զէպի իր Տէրը, համարձակութիւն չունեցաւ հաւատալու Անոր ներող սիրոյն, քանզի ինքզինքը Սատանային գործիք ըրած էր գիտակցօրէն ու կամաւ մեղանշած էր Սբ Հոգւոյն դէմ: Ուստի կորսուեցաւ: Բայց Պետրոս փրկուեցաւ: Թէեւ անոր յանցանքն ալ շատ ծանր էր, ապերախտօրէն ուրացած ու անիծած էր իր Տէրը, բայց ան, այս ամէնը ըրած էր աւհամայ, յանկարծակիի գալով, առանց կանխամտածութեան: Ուստի Յիսուս անոր շնորհեց նորէն Իրեն դառնալու, հաւատալու իր սիրոյն, քաւութեանը եւ աստուածորդութեանը:

Սակայն Պետրոս զեռ սորվելիք ունէր, բոլորովին մեռնելու էր իր յանձնապատասխանութեանը եւ առաջնորդուելու՝ խոնարհութեան զգաս-

տուեթեան եւ անձնագործ սիրոյ: Ուստի Յիսուս զայն անգամ մըն ալ Իր դպրոցն առաւ: Յարութենէն ետքն էր, աշակերտներէն եօթը Դաւիթիայի ծովակիրն եղերքն էին եւ ձուկ կ'որսային: Տէրը յայտնուեցաւ անոնց՝ դարձեալ ձուկերու հըրաշքի մը միջոցաւ եւ ճաշէն յետոյ Պետրոսը մասնաւոր հարցաքննութեան ենթարկեց: Չյանդիմանեց զայն ուրացմանը համար, միայն երրորդ անգամն ըլլալով հարցուց՝ հակառակ տըրւած կրկնակի դրական պատասխաններուն, «Սիմոն, Յովնանի որդի, զիս ատոնցմէ աւելի կը սիրե՞ս»: Եւ այս բաւական եղաւ աւելի խորացնելու Պետրոսի ապաշխարութիւնը. անիկա անգամ մըն ալ յիշեց իր անարկու անկումը, յիշեց թէ ինք փորձութենէ առաջ ալ պարծենցած էր, «Թէպէտ ամէնն ալ Քու վրայովդ գայթակղին, բայց ես բնաւ պիտի չգայթակղիմ... թէեւ քեզի հետ մեռնելու ալ ըլլամ, բնաւ Քեզ պիտի չուրանամ» (Մատ. ԻՉ. 33-35): Բայց այս խոստումները, բարի տրամադրութիւնները եւ անկեղծ փափաքները չէին դիմացած նոյնիսկ աղախինի մը ծաղրանքին: Տեսաւ թէ որքա՛ն տկար էր ինքը, որքա՛ն ենթակայ՝ շուտով հեռանալու իր Փրկչէն: Տեսաւ թէ միայն Անոր շնորհքովն էր որ դեռ կը մնար աշակերտներու շրջանակին մէջ եւ ատկէ ետքն ալ միայն Անոր սէրն ու զօրութիւնը պիտի պահէին զինքը: Իր կամքը, իր առաջադրութիւնը, իր սէրը արժէք մը չունէին:

Այսպէս Պետրոս իր գղջումի եւ անոր յաջորդող հարցաքննութեան ատեն՝ մեռաւ իր յանձնապատասխանութեանը, անձնափոխանութեանը եւ անձնական արդարութեանը: Կարճ խօսքով իր բնական մարդուն, ինչպէս որ Պօղոս ալ քիչ յետոյ՝ Դամասկոսի ճամբուն վրայ պիտի մեռնէր իր բնական ու փարիսեցիական կրօնին ու առաքինութիւններուն:

Բայց այդ հարցաքննութեան — կամ ըսենք դասախօսութեան — արդիւնքը միայն մահ մը չէր Պետրոսի համար, հապա նաեւ յարութիւն մը, բնական սիրոյն տեղը, որ իր խորքին մէջ անձնասիրական էր, իր մէջ ծնաւ ճշմարիտ աստուածատուր սէրը՝ երկայնամիտ, քաղցր, անսխալ, խոնարհ, անձնագործ եւ ամէն բանի հաւատացող, յուսացող ու գիշանող սէրը, վասնզի Պետրոս տեսաւ թէ ինքը իր աշակերտակիցներուն մէջ ամենէն խորը ինկած էր և իրեն հինգ հարիւր դահեկանի պարտքը ներուած էր (Ղուկ. Է. 41): Ուստի ինքն ալ պարտական էր ամենէն աւելի սիրել իր Փրկիչը:

Այլեւս Պետրոս պատրաստ էր. Յիսուս զի-

տէր թէ այս նորածին սէրը Պէնտէկոստէին օրը պիտի զօրանար և ուժանար: Ուստի համարձակութեամբ Իր վերագտած աշակերտին կրնար յանձնել հովուութեան զաւագանը՝ ըսելով, «Արածէ Իմ գառնուկներս, արածէ Իմ ոչխարներս»: Անիկա վստահ էր թէ Պետրոս Ս. Հոգւոյն զօրութիւնը ստանալէն յետոյ մեծ իմաստութեամբ, անձնագործութեամբ ու քաջութեամբ պիտի գործէր իր այդ պաշտօնին մէջ՝ հաւաքելով, խնամելով և անձնաւիրութեամբ պաշտպանելով զանոնք:

«Հրաշալիօրէն վսեմ է եղանակը, որով Յիսուս հոս Իր շնորհքն ու սրբացուցիչ կամքը կը յայտնէ միասնաբար: Երբ ներուած է այսպէս, այնքան փափկօրէն որ ինկածը բնաւ չենթարկուիր ամօթալի ստորնացման. ընդհակառակն կատարելապէս կը վերականգնուի. ձեռք կ'առնուի անոր կամքը լրջօրէն եւ ուժգնօրէն ու կը փըրկուի չարէն: Անկումէ կը փոխակերպուի սիրոյ զօրութեան, եւ սէրը՝ ծառայող դործի: Յովհաննէս եկեղեցւոյն մեծ ծառայութիւն մը մատուցած է՝ պատմելով ոչ միայն թէ Յիսուս մեծ քաղցրութեամբ ու համբերութեամբ կրած է ուրացող առաքեալը՝ Իր խաչելութենէն առաջ, հապա պատմելով նաեւ թէ Ան իբր յարուցեալ ալ զայն վերականգնած է զօրութեամբ ու սրբութեամբ»:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Հայր Մարթէնը չէ՞ք ճանչնար. խեղճ կօշկակար մըն էր ան: Նոյնիսկ ձեղնայարկ մը չէր ան ուր կը բնակէր, հապա իր գործատեղին, հերասենեակը, ննջարանը եւ խոհանոցը՝ ամէնը միացած էին փայտէ կրպակի մը մէջ: Իր Մարտէյի հին թաղամասին կեդրոնն էր և կը կազմէր Lench հրապարակին ու Martégales փողոցին անկիւնը:

Հոս էր որ ան կ'ապրէր փրկիստփայի կեանքով՝ ոչ շատ հարուստ եւ ոչ շատ աղքատ. կը կարկտէր թաղին հին կօշիկները, քանզի իր աչքերը տկարանալէն ի վեր նոր կօշիկներ չէր կրնար կարել:

Եթէ դուք զինքը չէք ճանչնար, St. Jeanի ձկնորսները, հնավաճառները և մեղուագունդի նման ժամը 4ին իր դռնէն անցնող մանուկները զինքը շատ լաւ կը ճանչնային. անոնց ամենուն ալ կօշիկներուն կտոր մը զարկած էր շատ մեծ խնամով, քանզի զիտէր թէ ո՛ր տեղն է որ անոնց ոտքերը կը վերաւորէ: Երբ տանտիկիննե-

ըը իրենց տղոց կօշիկներուն հաստատուն կրունկները զարնել կ'ուզէին, միայն իրեն կը վստահէին:

Ժամանակէ մը ի վեր Հայր Մարթէն բարեպաշտութեան համբաւը շահած էր, երթալէն ի վեր այն ժողովներուն, ուր երգեր կ'երգուէին ու Աստուծոյ վրայ կը խօսէին. իր կեանքը բոլորովին փոխուած էր: Առաջուրնէ ոչ աւելի պակաս եւ ոչ ալ գէշ կ'աշխատէր, ընդհակառակը զինքը ալիւս առաջուան պէս սրճարանը չէին տեսնէր: Մեծ գիրք մը ունէր որ յաճախ կը կարդար. ու եթէ մէկը ապակեփեղկէն նայէր զինքը շատ աւելի երջանիկ կը տեսնէր քան առաջ: Հ. Մարթէն իր դժբաղդութիւնները ունեցաւ: 20 տարի առաջ իր կինը մեռաւ և 10 տարիէ ի վեր իր որդին իբր նաւագ մեկնեցաւ եւ ալ չերեւցաւ: Իսկ գալով իր աղջկան՝ բնաւ չէր խօսեր անոր մասին: Եթէ մէկը հարցնելու ըլլար թէ ինչ եղաւ ան, ստուեր մը կը ծածկէր իր ճակատը և իբր պատասխան միայն իր գլուխը կը շարժէր: Այս ամենուն մէջ ինչպէս ըսինք, հիմա առաջուրնէ շատ աւելի երջանիկ կ'երեւնար, որուն պատճառը իր մեծ գիրքն ըլլալ կը թուէր:

Ծնունդի նախընթաց օրն էր, դուրսը շատ ցուրտ եւ խոնաւ, բայց Հ. Մարթէնի տունը պայծառ եւ տաք էր. իր դործը լինցուցած էր և ընթերիքը ըրած. իր պզտիկ վառարանը կը ճարճատէր եւ ինքը նստած թիկնաթոռի մը մէջ՝ ակնոցները քթին՝ սեղանին մօտենալով կը կարդար, «Վասնզի իջեալնին մէջ իրենց տեղ չկար»: Հոն կանգ առաւ մտածելու համար. «Տեղ մը չի կայ, երբեք տեղ մը չկայ իրեն»: Նայեցաւ իր պզտիկ ու նեղ բայց մաքուր սենեակին եւ աւելցուց, «Հոս տեղ մը կրնար ունենալ, եթէ դար, ինչ մեծ պատիւ զինքը ընդունիլ. անշուշտ ես պիտի նեղուէի և ամբողջ տեղը իրեն տայի. երբեք տեղ մը իրեն համար, օ՛, ինծի ինչո՞ւ չեն հարցներ. ես միտակ եմ, ոչ մէկը ունիմ որուն վրայ խորհիմ, ամէն ոք իր բարեկամը եւ ընտանիքը ունի, աշխարհի վրայ ո՞վ կը հոգայ ինծի համար, պիտի ուզէի որ դար եւ ինծի ընկերանար: Ո՛ւր էր թէ այս իրիկուն Փրկիչը աշխարհ գալու ըլլար, երանի՜ թէ իմ կրպակս ընծրէր մտնելու: Օ՛, ինչպէ՛ս իրեն պիտի ծառայէի, ինչպէ՛ս զինքը պիտի պաշտէի, ինչո՞ւ Ինքզինքը Հայտնիք այսօր ալ, ինչպէս առաջ: Ինչ կուտայի իրեն. Ս. Գիրքը ըսած է, ինչ որ քերին մոգերը. ոսկի, կնդրուկ եւ գումա, ես ասոնցմէ ոչ մէկը ունիմ, այդ մոգերը հարուստ էին: Բայց հովիւները ինչ տըւին, ատիկա չէ ըստած, թերևս ժամանակ չու-

նէին բան մը բերելու: Ա՛հ, գիտեմ թէ ինչ պիտի տամ»: Այս խորհուրդներով Հ. Մարթէն ելաւ ձեռքը երկնցուց դարակ մը, ուր գտաւ երկու պզտիկ մուճակներ, նորածին մանկան մը համար որոնք խնամով ծրարուած էին: «Ահաւասիկ, ըսաւ, ահաւասիկ ինչ որ ես իրեն կը նուիրեմ, իմ զուլիս գործոցս. մայրը գոհ պիտի ըլլայ. բայց ինչ կը խորհիմ, կրկնեց խնդալով, իրաւ է որ ես կը զառանցեմ. Փրկիչը ինչ պէտք ունի իմ խանութիս եւ իմ կօշիկներուս»: Ծերուկը խորասուզուեցաւ իր թիկնաթոռին մէջ եւ շարունակեց իր խորհրդածութիւնը: Բազմութիւնը հետզհետէ կը շատնար փողոցը, որքան որ իրիկունը կը յառաջանար, այնքան աղմուկը կը բարձրանար: Բայց Հ. Մարթէն չէր շարժեր, հաւանական է թէ քնացած էր: — Մարթէն, ըսաւ մեղմ ձայն մը մօտէն: — Ո՞վ կայ հոգ, պօռաց կօշկակարը ու ընդոստ դարձաւ դէպի դուռը, բայց ոչ մէկը տեսաւ: — Մարթէն, դուն զիս տեսնել փափաքեցար, աղէկ. վաղը առաւօտէն մինչև իրիկուն փողոցը նայէ, դուն պիտի տեսնես անցնիլս ոսկէ վայրկեանին: Ձառա զիս ճանչնալ, քանզի ես զինքս բնաւ չպիտի յայտնեմ: Ձայնը կտրեցաւ: Մարթէն աչքերը շփեց, քարիւղը հատնելով ճրագը մարած էր եւ ամէն կողմ ժամը 12ը կը զարնէր: Ծնունդը եկած էր, «Ինքն է, ըսաւ ծերուկը, խոստացաւ անցնիլ իմ դռնէս. արդեօք երա՞դ մըն էր, ինչ ալ ըլլայ վաղը պիտի սպասեմ: Զինքը երբեք տեսած չեմ, բայց եկեղեցիներուն մէջ չէ՞ որ հիացումով զիտած եմ իր պատկերին, պիտի կրնամ ճանչնալ զինքը»: Ասոր վրայ անկողին մտնելով՝ երկար ատեն իր լսած խօսքերուն վրայ մտածեց ու նորէն քնացաւ:

Առտուն շատ կանուխ կօշկակարին ճրագը վառուած էր: Նորէն ամուսի դրաւ վառարանը որ դեռ չէր մարած, եւ սկսաւ սուրճը պատրաստել: Շտապեց կանոնաւորել իր սենեակը և եկաւ նստաւ պատուհանին մօտիկ՝ զիտելու օրուան առաջին աղօտ լոյսը և առաջին անցորդները: Հետըզհետէ լուսցաւ եւ Մարթէն շուտով կրցաւ տեսնել հրապարակին վրայ փողոց աւլողները, որոնք մտացիր կերպով նայեցան իրեն: Դուրսը շատ ցուրտ կ'երեւէր, քանզի ապակին միշտ գոլորշիով կը ծածկուէր և ճամբայ աւլողները քանի մը անգամ աւելը շարժելէ վերջ կը ջանային ձեռքերնին տաքցնել, երբեմն մէկ ու երբեմն միւս ոտքերնին պետիւր զարնել: Քաջ մարդը ինչ ալ ըլլայ պաղած է: Այսօր տօն է, բայց ոչ իրեն համար, իցի՛ւ թէ իրեն գաւաթ մը սուրճ հրամքնէր. ապակին զարկաւ: աւլող մարդը գլուխը

դարձուց եւ ապակիին ետեւ տեսաւ Հ. Մարթէնը եւ մօտեցաւ: Հնակարկատը բացաւ իր դուռը եւ ըսաւ, «Մ'տէք, տաքցէք»: «Չեմ մտնէր, շնորհակալ եմ. ի՞նչ դէշ օդ, մարդ ինքզինքը Ռուսիա կը կարծէ»: «Գաւաթ մը սուրճ կ'ուզէ՞ք» ըսաւ Հ. Մարթէնը: «Ա՛հ, իրաւ որ ազնիւ մարդ էք, անշուշտ հաճոյքով, աւելի լաւ է ուշ, քան թէ երբեք չընել նախաճաշը: Կօշկակարը անմիջապէս հրամցուց սուրճը հիւրին, եւ արտօրաց դէպի պատուհանը՝ դիտելու փողոցը եւ հրապարակը, տեսնելու թէ մէկը կ'անցնէ՞ր: «Դուրսը ի՞նչ կը փնտռէք», հարցուց կօշկակարին: «Իմ Տէրոջս կը սպասեմ», ըսաւ: «Տէ՞րդ, դուք վաճառատան մէջ կ'աշխատիք, է՛հ, լաւ ժամանակ է գալ իր գործաւորը տեսնելու: Նախ այսօր ձեզի համար տօն է»: «Ուրիշ Տէրոջ մը համար է որ կ'ըսեմ» ըսաւ կօշկակարը. Տէր մը որ ամէն ժամու կրնայ գալ, եւ ինծի խոստացաւ գալ այսօր: Անունը չե՞ս գիտեր, Յիսուս է»: «Հասած եմ սակայն չեմ ճանչնար, ո՛ւր կը բնակի»: Հայր Մարթէն քանի մը խօսքով պատմեց ինչ որ կարդացած էր իրիկունը եւ պատուհանը դարձաւ՝ նոյն ատեն շարունակելով պատմել մանրամասնութիւնը: «Եւ Անտոն է որ կ'սպասեմ» հարցուց փողոցը աւելով՝ հասկնալէ վերջ թէ ինչ ըսել կ'ուզէր. «Քեզ կը վատահացնեմ որ չպիտի տեսնես, ինչպէս որ կը հաւատաս, բայց հոգ չէ, դուն զԱյն ինծի ցուցուցիր: Պարոն, գիրքդ ինծի փոխ կուտա՞ս. վատահղիք որ այս առաւօտ ժամանակդ չկորսնցուցիր, շնորհակալ եմ, մնաք բարի»: Փողոցը աւելով հեռացաւ: Հայր Մարթէն նորէն առանձին մնաց ճակատը ապակիին փակցուցած:

Կ'անցնէին քանի մը գինովներ, որոնք ուշացեր էին, յետոյ առեւտրականներ իրենց կառքերով: Մէկ կամ երկու ժամ վերջը Հ. Մարթէնի ուշադրութիւնը գրաւեց երիտասարդ տիկին մը՝ շատ խեղճ հագուած, ու իր բազուկներուն մէջ մանուկ մը զրկած: Կինը այնքան դեղնած եւ նիհար էր որ խեղճ ծերուկին գուլթը շարժեցաւ. թերեւս իր աղջիկը յիշեց: Դուռը բացաւ եւ գալն կանչեց, «Հէ՛, եկուր»:

Խեղճ կինը լսեց եւ դարձաւ: Զարմանք. տեսաւ Հ. Մարթէնը որ իրեն նշան կ'ընէր մօտենալու: «Շատ աղէկ չես երեւիր, աղուորս»: «Հիւանդանոց կ'երթամ, պատասխանեց երիտասարդ կինը, կը յուսամ թէ զիս պիտի ընդունին զաւակովս. ամուսինս ծովուն վրայ է, եւ ահա երեք ամիս է որ կ'սպասեմ»: «Ինչպէս ես կ'սպասեմ իմ որդիիս խորհեցաւ կօշկակարը: «Ինք չի գար եւ այս միջոցիս դրամ չունիմ եւ հիւանդ եմ,

պէտք է որ հիւանդանոց երթամ: «Խե՛ղճ կին, ըսաւ մարդը փղձկած. կտոր մը հաց չե՞ս ուտեր տաքցած միջոցիդ: Գոնէ գաւաթ մը տաք կաթ պզտիկին համար, ահաւասիկ իմ գաւաթս, դեռ չեմ խմած: Մանուկը ինծի ձգէ եւ տաքցիր. ժամանակին ես ալ ունեցած եմ. գիտեմ ինչպէս պէտք է վարուիմ հետը: Ի՞նչ, կօշիկ չե՞ս հագցուցած: «Չունիմ», հառաչեց կինը: «Սպասէ ուրեմն, ես գոյգ մը ունիմ որոնք քեզի կրնան ծառայել»: Ծեր գործաւորը մօրը առարկութիւններուն եւ շնորհակալութիւններուն միջեւ գնաց գտաւ կօշիկը: Հագցուց մանուկին որ շատ չաւ յարմարեցաւ: Մարթէն հառաչանք մը հանեց. այս միջոցին զատուելով իր զլուխ գործոցէն, իր կեանքին աւելնալու գործէն. «պա՛հ, ըսաւ, ես հիմա ալ լեւս ոչ մէկուն համար պէտքը ունիմ», եւ վերադարձաւ պատուհանին մօտիկ՝ այնչափ հետաքրքրուած որ երիտասարդ կինը զարմացաւ: «Ի՞նչ բանի կը նայիս հոգ», հարցուց վերջապէս կինը: «Իմ Տէրոջս կ'սպասեմ» պատասխանեց Մարթէն: Կինը չհասկցաւ ու չհետաքրքրուեցաւ ալ հասկնալու: «Տէր Յիսուսը կը ճանչնա՞ս»: «Անշուշտ» պատասխանեց կինը խաչ հանելով. շատ չէ անցած դեռ վարդապետականս սորվելէս ի վեր: «Անոր է որ կ'սպասեմ» յարեց ծերուկը: «Եւ կը յուսաս թէ ասկէ՞ պիտի անցնի»: «Ինքը ինծի ըսաւ»: «Կարելի չէ, ո՛հ, պիտի ուզէի քեզի հետ կենալ, տեսնելու համար, եթէ իրաւ է, բայց պէտք է դուն սխալած ըլլաս, եւ պէտք է որ ես երթամ հիւանդանոց ընդունուելու համար: «Կարդալ գիտե՞ս», ըսաւ կօշկակարը: «Այո», ըսաւ տիկինը: «Ուրեմն առ այս պզտիկ գիրքը», ըսաւ դնելով անոր ձեռքին մէջ աւետարանի մը մասը. զայն ուշադրութեամբ կարդա, ու թերեւս աւելի վերջը հասկնաս»: Երիտասարդ կինը առաւ գիրքը կասկածանքով մը, շնորհակալ ըլլալով հեռացաւ: Ծերուկը դարձեալ պատուհանին քով գնաց:

Ժամերը ժամերուն կը յաջորդէին ու անցորդները իրարու: Պզտիկ վառարանը միշտ կը ճարճատէր եւ Մարթէն իր թիկնաթոռին մէջէն դարձեալ փողոցը կը նայէր: Տէրը չէր երեւեր: Տեսաւ երիտասարդ քահանայ մը, խարտեաշ մազերով կապոյտ աչքերով, ճիշդ ինչպէս Քրիստոս կը ներկայացուի եկեղեցիի նկարներուն մէջ: Սակայն այն անցած ատենը «Մեղայ», կը մրմնջէր: Արդարեւ Յիսուս Ինքզինքը չպիտի դատապարտէր: Ասիկա Ան չի կրնար ըլլալ: Վերջապէս երիտասարդներ, ծերեր, նաւագներ, գործաւորներ, տիկիւններ՝ հարուստ ու աղքատ, ամբողջ աշխարհը

իր առջևէն անցաւ: Կարգ մը մուրացկաններ ա-
նոր նայուածքներէն կը կռահէին թէ բան մը պի-
տի ընդունէին, ու չէին խաբուած: Իսկ Տէրը չէր
երեւէր: Աչքերը յոգնած էին, իր սիրտը սկսաւ
կթոտիլ, Դեկտեմբերի օրերը շուտ կ'անցնին:
Արդէն ստուէրները երկարած էին հրապարակին
վրայ, լոյսերը կը ցոլային, պատուհանները կը
սկսէին փայլիլ եւ Մարտէյի բոլոր խոհանոցնե-
րէն կարմրած հնդկահաւին անուշ հոտը կը բու-
րէր, բայց Տէրը չէր երեւէր: Վերջապէս գիշեր
եկաւ ընկերացած մշուշին, ասկէ վերջ անօգուտ
էր պատուհանին մօտը կենալ: անցորդներն ալ
հազուադէպ էին, եւ կը հեռանային ծովուն մշու-
շին մէջ առանց ճանչցուելու: Ծերուկը տխրու-
թեամբ մօտեցաւ վառարանին եւ սկսաւ իր պար-
զուկ ընթրիքը պատրաստել: «Երազ մըն էր, մեր-
մընջեց ան, բայց ես շատ վատահ էի», ձաշը ա-
ւարտեց, բացաւ իր գիրքը, ուղեց կարգալ բայց
իր տխրութիւնը արգելք եղաւ: «Չեկաւ, չեկաւ»,
կրկնեց առանց դադրելու:

Մէկէն ի մէկ սենեակը գերբնական լուսով մը
լուսաւորուեցաւ, եւ դուռը առանց բացուելու այդ
նեղ կրպակը մարդով լեցուեցաւ: Նախ փողոց
աւուղները, երիտասարդ կիներ իր մանուկովը, ա-
սոնք կ'ըսէին, «Ձիւ չտեսա՞ր», Ասոնցմէ ետքը
եկան մուրացկանները, որոնց ողորմութիւն տը-
ւած էր, դրացիները որոնց քաղցր խօսքեր խօ-
սած էր, մանուկները որոնց ժպտած էր, եւ իւ-
րաքանչիւրը կ'ըսէր, «Ձիւ չտեսա՞ր»: «Բայց դուք
ո՞վ էք» պօռաց այն ուրուականներուն: Այն ա-
տեն կնոջ բազկաց մէջի պզտիկը ծռեցաւ ծերու-
կին գրքին վրայ եւ իր վարդազոյն մատովը ցու-
ցուց հետեւեալ համարը ճիշդ նոյն էջին վրայ
գոր ինք բացած էր: «Անթեցայ ու ինծի ուտե-
լիք տուիք, ծարաւեցայ ու ինծի խմցուցիք, օ-
տարական էի եւ զիս ներս առիք, մերկ էի եւ
զիս հագուեցուցիք, հիւանդ էի ու ինծի տես եկաք,
բանտի մէջ էի ու ինծի եկաք: Որովհետեւ այս
իմ եղբայրներէս ամենէն պզտիկներէն մէկուն
ըրիք՝ ինծի ըրիք»: Թարգ. Ա. ՍԱՐԲԱՅԵԱՆ

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

(Ը. ՏՍՐԻ 1932)

Խմբագրականներ.— Երկու խօսք՝ 1, Ճշմարիտ
մտքի նորոգութիւնը՝ 17, Յարութեան կարեւո-
րութիւնը՝ 33, Քրիստոսի համբարձումը՝ 49, Սը-
հոգիին մկրտութիւնը՝ 65, Եկեղեցին՝ 81, 97, Քը-
րիստոսի փառաւորութիւնը՝ 113, Քրիստոսի խո-
նարհութիւնը՝ 129, Տնտեսական տագնապը եւ

հաւատացեալը՝ 145, Քրիստոսի երկրորդ գալստ-
եան յոյսը եւ միսիոնարութիւնը՝ 161, Ծնունդի
պատգամը՝ 177:

Հոգեւոր կեանք.— Առօրեայ կեանքի հօթը
կանոններ՝ 3, Վերէն գօրութիւն՝ 4, Զօրութեան
սպասել՝ 19, Արտօնուած թէ արգիլուած՝ 21, Կը
փափաքէի արմտիքդ ունենալ հայրիկ՝ 22, Ճըշ-
մարիտ ապաշխարութիւն՝ 22, Պէտք է ձեզի նո-
րէն ծնանիլ՝ 23, Այսօրուան եկեղեցին՝ 25, 70,
103, 119, 136, Քաղաքին մէջ սպասել՝ 36, Արիւն՝
38, Շնորհք, շնորհք՝ 40, Անոր արեան գօրու-
թեան զաղտնիքը՝ 41, Զօրութիւնը ի՞նչ է՝ 52, 67,
Աստուծոյ հետ հաղորդակցութիւն՝ 55, Ս. Հոգիին
խոստումը՝ 69, Խոնարհութիւն թէ խոնարհե-
ցում՝ 83, Ինչո՞ւ 83, Յաջողութիւն թէ ձախողու-
թիւն՝ 84, 99, ԶԱստուած օգտակարապէս կը ճանչ-
նանք միայն Յիսուս Քրիստոսով՝ 101, Զօրութեամբ
լեցուելու պայմանները՝ 115, 131, Ստանայի եւ
իր ծառաներուն ժողովը՝ 135, Մեղքը՝ 147, 164,
179, Խորհրդածութիւն՝ 148, 168, Ինչպէս Ղոժաի
օրերը եղաւ...՝ 149, Հոգիի մը աճուրդի դրուիլը՝
167, Բժշկուած բորտին մաքրութիւնը՝ 181, Աս-
տուծոյ դառնալ՝ 183, «Ուստի տօն կատարենք»՝
185:

Ոտանաւորներ.— Բաներ՝ 2, Մսուրիդ դէմեա
ալ՝ 7, Սրբութիւն՝ 35, Գործէ՝ մշակ՝ 51, Առաջին
աւետարանչուհին՝ 86, Սուրբ ծարաւ՝ 95, Տաղ-
նապի պահեր՝ 117, Զղշում՝ 131, Հաւատք՝ 163,
Սքանչելի, Հգօր Աստուած՝ 184:

Ս. Գրական ուսուցանասիրութիւն.— Աստուա-
ծաշունչը՝ 10, 27, 42, 57, 72, 87, 104, 122, 139,
152, 167, 186: Պօղոս Առաքեալի միսիոնարական
գործը՝ 7, 26, 74, 89, 107, Պետրոս Առաքեալ՝ 123,
154, 171, 188:

Կենսագրական.— Ֆրէտէրիք Օպրըլին՝ 13, 29,
42, 59, 92, Կոմս Յինցէնտորֆ՝ 109, 125, 141, 156,
172:

Մանկանց սիւնակ.— Սամուէլ՝ 14, 63, 127,
Հարցումներ...՝ 16, 52, Նիգօլ՝ 30, Ծակուած ձեռ-
քին գօրութիւնը՝ 46, Նոր կօշիկներ՝ 79, Տուն
կ'երթայ՝ 94, Ի՞նչ կրնան ընել մանուկներ՝ 111,
Մանկական հաւատք՝ 144, Սուրբ Դիրքը կարգա՝
159, Ո՛ւր են քու մեղքերդ՝ 174, Հայր Մարթէնի
Ծնունդը՝ 189:

Այլեւայլ.— Շնորհաց ծովէն՝ 55, 118, Սերտո-
ղութիւն Յիսուսի կեանքէն՝ 59, 94, Ս. Դիրքը եւ
քաղաքական թերթերը՝ 61, 77, Զանազան լու-
րեր՝ 48, 96, 112 160 176:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39, Rue St.-Savournin - Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

(Շարանաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԻ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse
(Շարանաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն ժիւլիէնի, Սէն Թէոֆանի, Սէն Մարկրի-
մի, Սէն ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

ՍԷՆ ԼՈՒ.—

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՐ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԵԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.—Քարոզիչ' Պրն. Վահան Սահակեան,
18 Rue de l'Isle.

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ԹՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ— Հովիւ' Պատ. Ժ. Պարունեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:
15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ԷՍԹԻՍՍ.—

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով Pascalի շէնքը

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԷ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷՔԻԷՆ—Քարոզիչ Պրն. Ի. Արրանյամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.
17ին աղօթածողով
Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՅՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՉ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournesfort Paris 5^e
Metro Moule Aut. K.

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդաց
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար.

դոհեաց Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սր. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulinaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville.

Ծնունդն ու Նոր տարին կը մօտենան: Շատեր կը փափաքին իրենց սիրելի-ներուն նուէր մը տալ. աժան նուէր մը որ թէ ուրախութիւն պատճառէ եւ թէ ներքին շինութեան ծառայէ:

Խմբագրութիւնս այդ մասին դիւրութիւն մը տալու նպատակաւ հետեւեալ-ները կը ներկայացնէ որպէս մնայուն ու օգտակար նուէրներ:

1. ՄԵՐ ՅՐԱՅՈՅԸ 1933 տարուան համար, որ կը պարունակէ համար մը ամէն մէկ օրուան համար: Խորհրդածութեան նիւթեր եւ գեղեցիկ պատկեր մը ա. մէն մէկ ամսուան համար: Ան իր այս պարունակութեամբ կը լուսաւորէ միտ-քը եւ կը սփռուի սիրտը:

2. ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

(ա Բարի Հովիւ, Դուռը զարնող փրկիչը, քիսուս ծովն ու հովը կը հանդա-տեցնէ, Մարիամ եւ Մարթա (Մեծութ. 37 սեմ. երկ. 27 սեմ. լայն. գին՝ 5 ֆր. ձեռքէ, 6 ֆր. թղթ. ծախքով)

բ) Տասը կոյսերը (Մեծութ. 29 սեմ. երկ. 26 սեմ. լայն. գին 4ֆր. ձեռքէ, 5 ֆր. թղթ. ծախքով):

գ) Լայն ու նեղ ճամբան. (Մեծութ. 63 սեմ. երկ. 50 լայն. գին 6 ֆր. ձեռ-քէ, 7 ֆր. թղթ. ծախքով):

3. ՄԵՐ ԳԻՐՔԵՐԸ, որոնք ծննդեան եւ Նոր տարուան առթիւ մասնաւոր զեղ-ջով մը պիտի տանք:

Սատու Սուրբ Սինկի 160 էջ. գին 6 ֆր. Յրանսա եւ Սուրիա (փոխանակ 10 ֆր.), արտասահման 40 սէնթ (փոխանակ 75 ս.): բ) Ճօրճ Միւլլըրի կենսագրա-կանը 160 էջ. գին 6 ֆր. (փոխանակ 10 ֆր.). արտասահման 40 սէնթ (փոխանակ 75 ս.): գ) Անապատի եկեղեցին. Աւետարանի յաղթանակը Յրանսայի սէջ, 112 էջ, գին 5 ֆր. Յրանսա եւ Սուրիա. արտասահման 25 սէնթ (փոխանակ 50 ս.): դ) Ուղեցոյց Յամբորդին մահուանէ դէպի կեանք. 224 էջ, լի պատմութիւննե-րով 4 ֆր. Յրանսա, արտասահման 20 սէնթ (փոխանակ 50 ս.)

4. «Բանբեր» 1933 տարուան համար:

Հակառակ տիրող անտեսական տագնապին, 1933 ին ալ պիտի շարունակենք «Բանբեր»ի հրա-տարակութիւնը այժմու ծաւալովը՝ վստահելով Տէրոջ օգնութեան եւ առաջնորդութեան: Ուստի կը խնդրենք որ մեր բաժանորդները հաճին մեզ հիմակուրէն իմացնել բաց նամակով մը՝ թէ իրենց սիրելի է յաջորդ տարի (1933 ին) ալ ստանալ սեր թերթը: Շատ շնորհակալ պիտի ըլլանք, եթէ ընթերցողները հաճին գտնել ուրիշ բաժանորդ-ներ ալ: «Բանբեր», ի նպատակն է Աստուծոյ գոր-ծին յառաջդիմութիւնը, ուստի անոր տարած-մանը նպաստել թող հաճին այն ամէնը որոնք Տէրը կը սիրեն: